***799. ՄԻԱՆԱՎ ԴԱՀԼԻՃ*.** հարավային պատի արևելյան անկյունում, 8 տող

Ի :ՌԿԲ: (1213) ԹՎԻՍ ՀԱՅՈՑ
ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ԱՇՈՏՈՅ, ԻՄ ՀԱՒՐ ՏՎԱԾ ՀՈՂՆ, ԵՒ
ԱՅԼ ՅԱՎԵԼԻ, [ԵՏ] ՅԵԿԵՂԵՑԻՍ, ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ԵՏ-
ՈՒՆ Ի ՍԲ ՍԱՐԳՍԻ ՏԱՒՆԻՆ :Գ: (3) ՊԱՏԱՐԱԳ՝ ՄԻՆ ԱՇՈՏՈՅ, ՄԻՆ
ԽՈՒՇՈՒՇԻՆ ԵՒ ՄԻ՝ ԻՆՁ՝ ԳՐԻԳՈՐԻ: ԱՐԴ, ՈՐ ԶԴԱՍՆ
ԿԱՄ ԶՀՈՂՍ ԽԼԷ :ՅԺԸ: (318) ՍԲ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ
ՆԶՈՎԱԾ Է, ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՊԱՐՏԱԿ-
ԱՆ ԱՌԱՋԻ ԱՅ: ԱՄԷՆ:

*Հրատ.* «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 42, Ոսկյան, Գվ, 10:

***Ծանոթ*.** Վանքի (և գյուղի ողջ տարածքի) թվագիր հնագույն արձանագրությունն է: Գրիգորը եկեղեցուն է նվիրել հորից՝ Աշոտից ժառանգած հողը *եւ այլ յաւելի*, ստացածից ավելի շատ: 5-րդ տողի *զդասն* ասելով՝ նկատի ունի Ս. Սարգսի տոնին սահմանված պատարագները: Այս Աշոտն ու Գրիգորը Համազասպ Մարծպանի սերնդից են, բայց ճյուղագրությունը չի պարզվում: Արձանագրությունը ծածկվել է ավելի ուշ կառուցված Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատով, որն այժմ քանդված է և այն հնարավոր է կարդալ:

***800. ՄԻԱՆԱՎ ԴԱՀԼԻՃ*.** արևելյան պատի հարավային եզրում, արտաքուստ, 3 քարերի վրա, 6 տող



ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ, ԾԱՌԱ ՏՆ, ՀԻՇԵՑԻ
ԶԱՀԵՂ ԱՒՐ ՏՆ ԵՏ ԶԻՄ ՀՈԳՈ ՊԱ-
ՇԱՐՆ ՅԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՌԱՋՆ-
ՈՐԴՈՒԹԵ[ԱՄԲ] ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ]ԻՆ ԵՒ ՅԱԿՈԲԱ:
ԵՂԲԱՐՔՍ ԵՏՈՒՆ :Ա: (1) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի
ՏԱՒՆԻ ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍ[Ի], ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ ՏՆ Է:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 111, ՎՏ, 143, «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 41, Ոսկյան, Գվ, 10:

***Ծանոթ*.** Այս և հաջորդ արձանագրությունը, հավանաբար, գրվել են Տիրացու վարդապետի առաջնորդության վերջին տարիներին՝ 1240-ական թթ., քանի որ նրա հետ հանդես է գալիս նաև Հակոբը (Յակոբ)՝ երևի, իբրև աթոռակից:

*801. ՄԻԱՆԱՎ ԴԱՀԼԻՃ.* արևելյան պատին, արտաքուստ, նախորդից աջ, 4 տող.



ՁԱՒԼՊԷՔՆ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԻՒՐ [ԽՈՐԻՇ]ԱՀ, ՍԱԲԱՆ-
ԵՑԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՍ: ԵՒ ԵՍ՝ ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ] ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԸՆԿ-
ԱԼԱՔ ԶԱՌՕՑԱ ՅՈՅՍՆ ԵՒ ՏՎԱՔ :Բ: (2) ՊԱՏԱՐԱԳ ՄԲ ՅԱԿՈԲԻՆ
ՇԱԲԱԹՆ ԱՒՐՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի ՏԷ ԵՒ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀ[Ն]ԻՆ ՅԱՅ[]:

*Հրատ.* Զալալյանց, Ա, 111, ՎՏ, 143, «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 41:

*Ծանոթ.* Ջալալյանցը *Զաւլպէքն* կարդացել է *Զուլբէգն*, 4-րդ տողի *զառցա յոյսն՝ զԱստուծոյ յոյսն*, բաց է թողել 1-ին տողի *իւր* դերանունը, 4-րդի՝ *աւր* բառը: Այս և մի քանի այլ արձանագրություններ Կոստանյանցը դրել է 1204թ. տակ՝ հայտնի չէ ինչից ելնելով:

*802. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.* հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ (գավթի մեջ), 8 տող.



ԹՈՒ[Ի]Ն[]
ՈՀ (1221),
[Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ] ԳԷՈՐԳԱ, ՈՐԴՈՅ ԹԱՄԱՐԻՆ ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵ[ԱՆ ՄԵ]Ծ ԻՒԱ-
ՆԷԻ ԱԹԱԲԱԿԻՆ, ԵՒ ՆՈՐԻՆ ԶԱՒԱԿԱՑ ԱՒԱԳԻՆ ԵՒ ՇԱՀՆՇԱՀԻ, ԵՍ՝ ՄԱՐԶՊԱՆ,
ՈՐԴԻ
[ՍԱՐԳՍԻ, ԹՈՌՆ ՀԱՄԱ]ԶԱՍՊԵԱՆՑ, ՅԱԶԳԷ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ, ՍԿՍԱ ՇԻ[Ն]ԵԼ ԶԲԱՐՁ-
ՐԱՔԱՇՍ ՎԱՆՔ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂ ԻՆՁ ԵՒ ԶԱՄԵՆԱՅՆ
ԵԿԵՂԵՑԻՔՍ՝ ՅԻՄ ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ.
[ՇԻՆԵՑԻ ԵՒ ԶԾԱ]ԴԿՈՒՏՆ ԶԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՆ ԳԱՆ[ՁԱ]ԳԻՆ ԱՐԱՐԻ: ԵՒ ԶՍԵՐԵԿԱ-
ԳՈՄՍ, ՈՐ ԱՒԵՐԱԿ ԷՐ, ՇԻՆԵՑԻ ԵՒ ԱՒԱՆԴԵ[ՑԻ] ԵԿԵՂԵՑՈՅՍ.
ԵՒ ՅՈՂՋԱԲԵՐԴ՝ ԱՅԳԻ ՄԵԾ: ԵՒ
[ԶԱՐԴԱՐԵՑԻ ՍՊԱՍ]ԻՒՔ, ՆՇԱՆԻՒՔ ԽԱՉԻ ԵՒ ԳՐ[ԵՆԱՒՔ ԹԱՆԿԱԳ]ՆԻ ԵՒ ԶԵՐԿՈՒ
ԵԿԵՂԵՑԻՔՆ ԶԱՒԱԳ ԲԵՄՆ ԻՆՁ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ ՔՍ
ՀԱՆԱՊԱԶ. ԵՒ ԶՋՐԱՒՐՀՆԵԱՑՆ ԱՒՐՆ

⌈ՄԱՄՔԱՆԱ՝ ԱՄՈՒՍՆ⌉Ո ԻՄՈ: ՈՐ ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱ ԿԱՄ........ ԵՒ ՀԱՆԵԼ ՅԵԿԵՂԵ-
ՑՈՅԱ, ԿԱՄ ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ՝ ՄԵՐ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԳԻ
ՄԵՂԱՑ ԵՒ ԽՂՃԻ ՊԱՐՏԱԿ-
⌈ԱՆ Է ԵՒ ։ՅԺԸ։ (318) Ի⌉ՑՆ ՆԶՈՎԵԱԼ ⌈ԵՂԻՑԻ ԵՒ ՈՐ⌉ ՀԱՍՏԱՏ ՊԱՀԷ ՁԱՒԱՆԴՍ Յ Ա̅Յ̅
ԵՒ Ի ՍՐԲՈՑ ՆՈՐԻՆ ԱՒՐՀՆԵՍՑԻՆ: ԱՄԷՆ:

*Հրատ.* «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 44, Ոսկյան, Գվ,11-12:

***Ծանոթ***. Առաջին երկու քարերն ընկած են, որոնց վրա է վեց տողերի սկիզբը: Հաջորդ մասերը ծածկված են եղել կցարկված գավթի որմնասյունով, որի վերևի մասն այժմ քանդված է, և երեք տողերը բացված: Պատից պոկված սյան ետևից կարդացվում են որոշ հատվածներ: Վերջին երկու տողերը ջարդոտված են:

Շինարարանվիրատվական այս կարևոր արձանագրությունը փորագրվել է եկեղեցին ավարտելուց հետո, Իվանե աթաբեկի կենդանության ժամանակ:

Սույն արձանագրությունը մնացել է գավթի որմնասյուների ծածկույթի տակ, ուստի ժամանակին փոխադրվել է վերջինիս պատին:

Գ. Սարգսյանը 5-րդ տողի *զՄերեկագոմս* (=Սարյակագոմս) կարդացել է *զՄերա-կագոմս:* Նա առհասարակ կետադրական նշաններ չի գործածել, անհրաժեշտ ան-ջատումներ չի կատարել, ուստի նրա վերծանություններում անհասկանալի են մնում տարբեր գործողություններն ու իրողությունները: Մամիկոնյան տոհմի ականավոր ներ-կայացուցիչ Մարզպանի (նաև՝ Մարծպան) ***սկսա շինել զԲարձրաքաշս վանք եւ զերեզ-մանատեղ իմծ եւ զամենայն եկեղեցիքս*** արտահայտություններից հետևցնում է, որ ***Բարձրաքաշ*** տեղանվանումը եղել է դեռևս նախքան Մամիկոնյանները, որ նա նորոգել է հին եկեղեցին և կառուցել նորը (= ***եկեղեցիքս***), որ ***վանք*** ասելով՝ հասկացվում է ոչ թե աղոթարան, այլ հոգևոր-մշակութային կենտրոն՝ միաբանությամբ, կրթարանով, գրչատ-նով, գիտնական-վարդապետներով:

Ի դեպ, 7-րդ տողի ***որ խափանել ջանա կամ .... են հանել*** հատվածը գավթի վրա տեղափոխվածի 6-րդ տողում անավարտ է. ***արդ, որ հակառակ կա գեղի կամ կոպարի, խլել եւ հանել,*** սակայն խուսափում ենք նույնությամբ վերականգնել՝ նկատի ունենա-լով վերախմբագրության հնարավորությունը:

*Երկրորդ տողում ԶԲԱՐՁՐԱՔԱՇՍ ՎԱՆՔ բառակապակցությունը՝ լուսանկարն ուշա-դիր զննելիս, կարդացվում է ԶԲԱՐՁՐԱՔԱՇԱ ՎԱՆՔ (խմբ.):*

***803. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. հարավային պատի արևելյան մասում, արտա-քուստ (գավթի մեջ), 4 տող.



⌈ԵՍ՝ Ա⌉ՇՈՏ, ՈՐԴԻ Գ⌈ԱՒՐԳԷԻ⌉, ՄԵԾԱՒ Յ⌈ՈՒՍՈՎ ԵՏՈՒ⌉ ՅԱ⌊ՍՏՈՒԱ⌋ԾԱԾԻՆՍ ։Բ։ (2)
ԿՈՌԱՎԱՐ, ։Ա։ (1) ՄԱՒՏ ՅԵ⌈Գ⌉ԵՑԻՆ, ՈՐ Ի ԽՐԱՄԻՆ, ։Ա։ (1) ՄԱՒՏ՝ Ի ԾԱՂԿՈՒՏՆ:
ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ Ա̅Յ̅ ՄԻՋՆՈՐԴՈՒԹ⌊ԵԱՄ⌋Բ ԵՒ ՎԿԱՅՈՒԹ⌊ԵԱՄ⌋Բ ԵՒ ԿԱՄԱԿՑՈՒ-
Թ⌊ԵԱՄ⌋Բ ԹԱՒԻԿԱ՝ ՄԱՒՐ ԻՄՈ ԵՒ ԱԱԼԱՆԱ՝ ԵՂԲ-
⌈ԱՒՐ ԻՄՈ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ⌉ Ս̅Բ̅ ՈՒԽՏԻՍ ԵՏՈՒՆ ԻՆՁ ։Ի։ (20) ՊԱՏԱՐԱԳ: ԱՐԴ, ԵԹԷ
ՈՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ ԳՐԵԼՈՑՍ ԵՒ ՁԻՄ ՄԻԱԲԱՆՈՒԹ⌊ԻՒՆ⌋Ս ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱ ԿԱՄ

ԶՅՈՂՆ ԽԼԵ ՎԱՆԱՑՍ ԵՒ ԶԻՄ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ՛ ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ,
ՊԱՐՈՆ ԿԱՄ ՃՈՐՏ, ԿԱՄ ԵՂԲԱՅՐ,
[ԿԱՄ ԱԶԳԱԿԱՆ, ԿԱՄ] ՈՎ ԻՑԷ՛ ԽԱՓԱՆԵՍՑԷ .... ՅԱԶՈՂՈՒԹԻ[ՒՆ] ԵՒ ԿԱՊԵՍՑԷ ԶՆԱ
ԱՆԼՈՅԾ ԿԱՊԱՆԱՒՔ, :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԵԱՑԻ, ՅՈՒԴԱՒ ԵՒ ԿԱԵՆԻ
ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ ԵՒ ՄԻ ԸՆԿԱԼՑԻ ԹՈՂՈՒԹԻ[ՒՆ] Յ Ա̅Յ̅, ՄԻ ՅԱՅ[ՍՄ] ԱՇԽԱՐՀԵ
[ԵՒ ՄԻ ՀԱՆԴԵՐՁԵԼՈՒՅՆ] ԱՌԱՋԻ Ա̅Յ̅: ԵՒ ԵՂԵՒ ԳՐՈՒԹԻ[ՒՆ] Ս ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ]
ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏԻՆ] ԵՒ ՀԱՒՐ ՅԱԿՈԲԱՅ: ՀԱՍՏԱՏ Է ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅:
ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ ՍԿՍԵ[Ա]Լ ԱՐՆԵՆ ԶԻՄ ԺԱՄՆ ԵՒ ԱՒՐՀՆԻՆ Ի Տ̅Է̅:

*Հրատ.* «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 44-45, Ոսկյան, Գվ, 12:

***Ծանոթ***. Սկզբի մասում քարերը խիստ հողմնահարված են, իսկ որոշ հատվածներ էլ ծածկված են գավթի կցված որմնասյուներով, որոնք այժմ խախտված լինելով՝ երկու կողմերից որոշ չափով տեսանելի են: Ինչպես նախորդ արձանագրությունը, այնպես էլ սա, ունի իր կրկնօրինակը (տե՛ս արձ. 811), սրանք գրված են եղել գավիթը շինելուց առաջ և քանի որ ծածկվել են՝ կրկնվել են գավթի պատերին:

Նվիրատու Աշոտի անունը :ՈՁՁ: (1237) արձանագրության մեջ ևս կա:

Տեղագիրները խուսափել են այս շատ կարևոր, բայց տեղ-տեղ հողմահարված, դժվարընկալ արձանագրության ընդօրինակումից: Իսկ միակ հրատարակիչ Գ. Սարգսյանին չի հաջողվել հասու լինել բուն իմաստին (ճշտորեն վերծանել այն): Առաջին տողի շատ կարևոր ***մեծաւ յուսով էտու յԱստուածածինս :Բ̅: կոռաւար, :Ա: մաւտ յեգեցին, որ ի Խրամին, :Ա: մաւտ՝ ի Ծաղկուտն*** կապակցությունը նրա մոտ դարձել է. ***մեծաւ յուսով ... յԱծածինս :Բ: մեծ կոռավար :Ա: մասն յեկեղեցին որ ի Խրաին :Ա: մասն Ծաղկուտն:*** ժամանակին նման խրթին ու հակիրճ ձևակերպումն ըմբռնելի է եղել. ***:Բ: կոռավար*** նշանակել է, որ հպատակ գյուղացիները սեփական արորով կամ գութանով կամ լծկաններով, անհատույց, կոռային եղանակով երկու օր մշակելու են սեփականատիրոջ հողը: Տվյալ դեպքում, Աշոտ Մամիկոնյանը, իր մայր Թաիկի և եղբոր՝ Ասլանի ***կամակցութեամբ*** երկու օրավար (= ***Բ կոռավար***) հող է շնորհել Բարձրաքաշի վանքին, որի վարուցանքը պետք է ձրի կատարեին համայնքի անդամները: Բացի այդ, տրվել է նաև ***:Ա: մաւտ յեգեցին, որ ի Խրամին, :Ա: մաւտ՝ ի Ծաղկուտն***, ուր խոսքը վերաբերում է Խրամում (արդյոք Խրամ գետի մոտ թե մի այլ խանդակում) և Ծաղկուտի այգիներից (= ***յեգեցին***) մեկական (***:Ա: մաւտ***) խաղողի այգի, տնկարկ նվիրելուն: ***Մաւտ***-ն այստեղ չափի միավոր է:

Երկրորդ տողի էթէ ոք հակառակ կա գրելոյս տեղական խոսվածքի փոխարեն սպասելի էր ***էթէ ոք հակառակ կայ*** կամ ***հակառակայ վճռիս*** (ընդդիմանա, խախտի, վճիռս խափանի) ձևակերպումը:

Հ. Ոսկյանը իր գրքի մեջ, ներմուծելով Գ. Սարգսյանի վերծանած տեքստը, կրկնել է նրա սպրդումներն ու ամբողջովին բաց է թողել 2-3-րդ տողերը:

***804. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. արևելյան պատի հարավային մասում, նախորդից հյուսիս, 6 տող.



ԵՍ՝ ՏԻԿԻՆ, ԴՈՒՍՏՐ ՋՈՒՆՏԿԱՆՆ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ ԸՌԱՏԻՆ,
ՄԻԱԲԱՆԵՑԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՄԲ] ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ]-
ԻՆ, ԵՒ ԵՏՈՒ Ի ԿԱՐԵՑ ԺԱՄՈՒ :Ծ: (50) ԴԵՀԵԿԱՆ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ Խ-
ՈՍՏԱՑԱՆ ԻՆՁ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ ՔՍ ՅԱՆՈՒՆ ԻՄ Ի ՏԱՒՆԻ ՍԲ Կ-
ՈՒՍԻՆ ԹԵԿՂԻ ՅԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ:ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ

ՅԱՅ:

*Հրատ*. Ջալալյանց, Ա. 110. ՎՏ.147, «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 43:

***Ծանոթ***. Ջունդիկը հանդիպում է նաև Հոռոմայրի վիմագրերում, որը թվագրված է 1247-ով, իսկ Տիրացու վարդապետը Բարձրաքաշի վանահայրն է եղել 1216-1250 թթ.:

Երրորդ տողի ***եւ էտու ի կարեց ժամիս : Ծ : դեհեկան*** կապակցության Ջալալյանցի ***և ետու կարեաց ժամուց Ծ դահեկան*** ընթերցումը չի օգնում մտքի պարզեցմանը: Այն պետք է ընկալել, որ Տիկինը եկեղեցու կարիքների համար (= ***ի կարեց ժամու***) 50 դահեկան (ավելի քան 200 գրամ ոսկի) է ընծայել վանքին և դրա դիմաց ***Թեկղի*** (Ջալալյանցի մոտ՝ Թեկղեայ) տոնին բոլոր եկեղեցիներում պատարագ ստացել: ***Թեկղին*** Պողոս առաքյալի աշակերտուհին է, որին խոշտանգել են Ներոն կայսեր ժամանակ և համարվում է առաջին վկայուհին: Այս արձանագրությունը ևս Կոստանյանը թվագրել է 1204 թ.՝ առանց հիմնավորման:

***805. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. արևելյան պատի հարավային մասում, արտաքուստ, 6 տող.



[Ի ԹՎԻՆ :Ո]ՁԸ: (1239), ԵՍ՝ ՄԱՐԿՈՍ, ԾԱՌԱ ԱՅ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ
[ԻՄ ՇՈՒ]ՇԻԿ, ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՎԱՆԱՑՍ ԵՒ ՋՄԵ-
Ր ՀՈԳՈ ԲԱԺԻՆ ՏՎԱՔ ՅԵԿԵՂԵՑԻՍ. ԵՒ ՍՊԱՍԱՒ-

ՈՐՔ ՍՈՐԱՑ ԽՈՍՏԱՑԱՆ Ի ՏԱՐՈՋՆ :Բ: (2) ԱՒՐ ՊԱՏԱՐ-
ԱԳ ՄԵԶ՝ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ԽԱՉԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ
ՅԱՅ ԵՒ [ՄԵՐ Մ]ԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 109, ՎՏ, 31 (կես մասը), «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 43:

*Ծանոթ.* Թվականի տառերը ջարդված են, Ջալալյանցն այն վերականգնել է ՈԹ-1160, իսկ Սարգսյանը՝ ՈԲ – 1153, երբ եկեղեցին դեռևս կառուցված չէր: Միավորը նշմարվում է Ը (8), իսկ նրանից վեր, այլ քարի վրա, պատվի նշանով՝ Ձ (80), երևի քարը ջարդվել կամ գրիչն է սայթել ու ավելացրել: Կարգով առավել հավանական է ՈՁԸ (1239) թվագրումը:

*Վերջին տողի վերականգնումը թեական է (խմբ.):*

*806. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.* արևելյան պատի հարավային մասում, արտաքուստ, 6 տող.



[Ի ԹՈՒԻՆ] Ո
ՂԷ (1248),
ԵՍ՝ ԱՌԻԾ, ՈՐԴԻ ԳԱՒՂԿԱՆՑ ԺԱՒՂԼԿԱՆՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՄԱ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ [ՍԲ ՈՒԽՏԻՍ]
ԵՒ ՏՎԱՔ ՅԱ[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ ՁՄԵՐ ՀՈԳՈ ԲԱԺԻՆՆ՝ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹ[ԵԱՄԲ] ՏԻ-
ՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ]ԻՆ:
ԵՒ ԽՈՍՏԱՑԱՆ ՄԵԶ ՅԱՄԷՆ ԱՄԻ Ի ՏԱՒՆԻ :Խ: ԻՑՆ (քառասնիցն) ՊԱՏԱՐԱԳ, ՈՐ ԼԻ-
ՆԻ ԱՅՆ ԱՒՐՆ Ի Մ-
ԵՐ ՅԱՆՈՒՆ ԱՐՆԵՆ ԵՒ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 109, ՎՏ, 92 (կրճատումներով), «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 43:

*Ծանոթ.* Ջալալյանցն 1-ին տողում կարդացել է *Գաւեղկեանց Ծաղկլանն և ամուսին իմ Մարիամ՝* շրջանցելով բնագիրը: Սարգսյանը Առյուծի (= Առիւծ) հայրանունը կարդացել է *Ծաւղլկանն՝* թեև սկզբնատառը պարզեպարզ ժ է և ամենևին նման չէ բնագրի Ծ-երին: Նրա մոտ չկա նաև թիվը, այն վրիպել է աչքից:

***807. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. արևելյան պատի հյուսիսային անկյունում, արտաքուստ, 9 տող.



Ի Թ[ՎԻՆ]
ՈՉԵ (1236),
ԵՍ Գ ... ՏՆ,
ՅԻՇԵՑԻ ՁԱՀԵՂ ԱՒՐ ՏՆ,
ԵՏՈՒ ԶԻՄ ՀՈԳՈ ՊԱՇԱՐՆ ԵԿԵ-
ՂԵՑԻՍ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՏԻՐ-
ԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ]ԻՆ: ԵՂԲԱՐՔՍ ԵՏՈՒՆ ...
ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԻԳ[ՆԱՏԻՈՍԻ:]
ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի ՏԷ:

*Հրատ*. «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 43:

***Ծանոթ***. Արձանագրությունը ջարդոտված է, թերևս միտումնավոր: Համենայն դեպս, նվիրատուի անունը և պատարագների քանակը «խնամքով» ջնջված են:

***808. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. արևելյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, 7 տող.



Ի ԹՈՒ[ԻՆ]
ՈՉԸ (1239),
ԵՍ՝ ՀԱՄԼԻԿ, ՈՐԴԻ ՍՄԲԱՏԱ ԵՒ ԹՈՌՆ ՀԱՄԱԶԱՍՊԱ, ՅԱԶԳԷ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ, ԿՐԿԻՆ
ՄԻԱԲԱՆԵՑԱ ԻՄ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆՍ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԱՄՔԱՆ, ԵՒ ԵՏՈՒ
ՅԱ[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ ՏԱՒՆԱԿԱՆ ԵՒ ԶԿԱՐՄԻՐ ՔԱՐՆ՝
ԻՒՐ ԱՄԷՆ ԵՌԱՆԴՈՎ: ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ԻՆՁ ՅԻՇԱՏԱԿ ՄԱՏՈՒՌՆ ՄԻ, ԶՈՐ ՅԻՄ ՅԱ-
ՆՈՒՆ ՇԻՆԵՑ ԵՒ ԵՏ ԻՆՁ ՀԱՒՐԵՂԲԱՅՐ ԻՄ ՄԱՐԶՊԱՆ, ՈՐ ԱՆԽԱՓԱՆ ՄԵՐ
ԼԻՆԻ ՊԱՏԱՐԱԳՆ, ՈՐ ԱՆԴ ԼԻՆԻ :Բ: (2) ՄԱՄՔԱՆ –
ԱՅ ԱՐՆԵՆ Ի ՇԱԲԱԹՆ, ԵԹԷ ՈՔ ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ, Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈՔՈՒՆՑ
ԶԳԵՂՆ ԽԼԷ ԿԱՄ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ ԵՒ ԶՄԵՐ ՅԻՇԱՏԱԿՆ ԽԱՓԱՆԷ՝ ՅՈՒԴԱՅԻ ԵՒ
ԽԱՉԱՀԱՆՈՒԱՑՆ ՄԱՍՆԱԿԻՑ Է,
:ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԱԾ Է, ՄԵՐ ԱԶԳԻ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է
ԱՌԱՋԻ ԱՅ: ԵՒ ԵՍ՝ ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ], ԱՄԷՆ ԵՂԲԱՅՐՈՒԹ[ԵԱՄ]ԲՍ,
ԸՆԿԱԼԱ ԶՍԱՑԱ ՅՈՅՍՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՎ: ՈՐ ԿԱՏԱՐԷ՝
ԱՒՐՀՆԻ ՅԱՅ: ԱՄԷՆ:

*Հրատ*. Ջալալյանց, Ա, 110, ՎՏ-81 (կրճատումներով). «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 42, Ոսկյան, Գվ, 10-11:

*Ծանոթ. Կրկին միաբանեցա իմ գերեզմանատանս* արտահայտությունը վերաբերում է երկրորդ անգամ նվիրատվություն անելուն: Այս դեպքում Աստվածածին եկեղեցուն է նվիրվել «Տոնավան» և Կարմիր քար գյուղը՝ *«իւր ամէն եռանդով»* իր սահմաններով, հողով ու ջրով: Դիտելի է, որ Համլիկը 1229 թ. Սանահնի վանքի Աստվածածին եկեղեցուն է տվել նույն Կարմիր քար գյուղից *լմն* հող, իսկ այս դեպքում գյուղ տալիս է Բարձրաքաշին՝ *իւր ամէն նուսնդով:*

Համլիկի հորեղբայր Մարզպանի կառուցած մատուռը, որում պետք է անխափան պատարագ մատուցվեր, հավանաբար, նկատի ունի եկեղեցու արևելյան անկյունների կրկնահարկ ավանդատներից մեկը: Վերջին տողի *զսացա* ղերանվան կիրառությունը *զսոցա*-ի փոխարեն հազվադեպ դիպված չէ:

*809. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ*. արևելյան պատի հյուսիսային մասում, նախորդից ներքև, արտաքուստ, 4 տող.

ԵՍՀԱՄԼԻԿԵՒՍԱՂՈՒՆԿԱՏԱՐԵՑԱՔԶԱՆԴԱՐՋԾՆՈՂԱՑՄԵՐՈՑԵՒՏՈՒԱՔՋՋՈՐԱՒՌԱՆՑՈՅԿԷՍՆՅԵԿԵՂԵՑ
ԻՍԵՒՍՊԱՍԱՒՈՐՔՍՈՐԱՅԽՈՍՏԱՑԱՆԴԱՒՐՊԱՏԱՐԱԳԻՏԱՒՆԻՀԱՄԲԱՐՁՄԱՆԲՆՐՃԱՒՆԵՒԲԱՂՈՒՏԻՆԿԱՏԱՐԻՉ
ԱՒՐՀՆԻՆՅԱ̅ՅԵՒՈՐՀԱԿԱՌԱԿԿԱՅԵՒԶԳԵՂԽԼԷՅԵԿԵՂԵՑՈՅՍԻՄԵՐՈՑԿԱՄՅԱՒՏԱՐԱՑԵՒԶՄԵՐԺԱՄ
ՆԽԱՓԱՆԷՄԵՐԱԶԳԻԵՒՄԵՐՄԵՂԱՑՆՊԱՐՏԱԿԱՆԷԱՌԱՋԻԱ̅ՅԵՒԱՌՑԷՆԶՈՎՍԻՔ̅Ս̅Է̅

ԵՍ՝ ՀԱՄԼԻԿ, ԵՒ ՍԱՂՈՒՆ, ԿԱՏԱՐԵՑԱՔ ԶԱՆԴԱՐՋ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՏՈՒԱՔ ՋՋՈՐ
ԱՒՌԱՆՑՈՅ ԿԷՍՆ ՅԵԿԵՂԵՑ-
ԻՍ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱՅ ԽՈՍՏԱՑԱՆ :Դ: (4) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՀԱՄԲԱՐՁ-
ՄԱՆ՝ :Բ: (2) ՆՐՃԱՒՆ ԵՒ :Բ: (2) ԱՂՈՒՏԻՆ: ԿԱՏԱՐԻՉ[ՔՆ]
ԱՒՐՀՆԻՆ ՅԱ̅Յ̅, ԵՒ ՈՐ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՅ ԵՒ ԶԳԵՂ ԽԼԷ ՅԵԿԵՂԵՑՈՅՍ, Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ
ՅԱՒՏԱՐԱՑ, ԵՒ ԶՄԵՐ ԺԱՄ-
Ն ԽԱՓԱՆԷ՝ ՄԵՐ ԱԶԳԻ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ Ա̅Յ̅. ԵՒ ԱՌՑԷ ՆԶՈՎՍ
Ի Ք̅Ս̅Է̅:

*Հրատ.* Ջալալյանց. Ս. 110-111. «Էջմիածին». 1951, Թ-Ժ, 42:

*Ծանոթ*. Արձանագրությունը փորագրված է նախորդից անմիջապես ցած, նույն տառաձևերով, երևի թե՝ միաժամանակ (1239 թ.): Հնարավոր չէ պարզել այս Համլիկի առնչությունն առաջինի հետ և անգամ Սաղունի հետ ունեցած արյունակցական կապը: Եթե այստեղ հանդես եկող Նրճիսը Համլիկի կինն է (իսկ Աղուտը՝ Սաղունի), ապա բոլորովին այլ անձ է և կապ չունի Մամքանի ամուսին, Սմբատի որդի Համլիկ Մամիկոնյանի հետ: *Ջչոր աւռանցոյ*, որ պետք է հասկանալ Չոր առուների (գյուղի), կարդացել են *զՉորաւռանցոյ:* Նվիրատվական վիմագրերում հաճախ են փաստագրվում վճռախախտողների նկատմամբ անեծք-բանադրանքով պատժամիջոցի կիրառումը *(= ոչ հակառակ կայ եւ զգեղ խլէ յէկեղեցոյս),* նման խախտումների հնարավորությունը և այն կանխելու համար գործադրվող միջոցները: Հարցը պատմական և իրավական առումով արժանի է մանրակրկիտ քննության:

ԳԱՎԻԹ

*810. ԳԱՎԻԹ*. հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, 7 տող



ԹՈՒ[ԻՆ]

Ո̄Հ(1221):

Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ[Ա]Ն ԳԷԱՒՐԳԵԱ, ՈՐԴՈՅ ԹԱՄԱՐԻՆ, ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱԹԱՊԱԿ
ԻՒԱՆԷԻ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ՆՈՐԱ ԱՒԱԳԻՆ ԵՒ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ԵՍ՝ ՄԱՐԾ̄ՊԱՆ,
ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ, ԹՈՌՆ ՀԱՄ[ԱԶԱՍՊ]-
ԵԱՆՑ, ՅԱԶԳԷ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ, ՇԻՆԵՑԻ ԶՎԱՆՔՍ ԵՒ ԶԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՅԻՄ ՀԱԼԱԼ
ԱՐԴԵԱՆՑ, ԵՒ ԱՐԱՐԻ ԻՆՁ ՏՈՒՆ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԻ, ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ,
ԵՒ ԱԶԳԱԿԱՆԱՑ: ԵՒ ԶԾԱՂ[ԿՈՒՏՆ,]
ՈՐ ԷՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ՝ ԳԱՆՁԱԳԻՆ ԱՐԱՐԻ. ԵՒ ՍԷՐԵԿԱԳՈՄՍ ԱՒԵՐԱԿ ԷՐ՝ ՇԻՆԷՑԻ ԵՒ
ԱՒԱՆԴԵՑԻ ԵԿԵՂԷՑՈՅՍ, ԵՒ ՅՈՂՋԱԲԵՐԴԻ ԱՅԳԻ ՄԵԾ̄: ԵՒ ԶԱՐԴԱՐԵՑԻ
ՄԵԾԱԳԻՆ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՍՊԱՍԻՒՔ, Խ[Ա]ՉԻՒՔ ԵՒ ՄԱՍԱՄՔ,

ԵՒ ԳՐԵՆԱՒՔ: ԵՒ ԿԱՐԳԵՑԻ Զ :Բ: (2) ԱՒԱԳ ԲԵՄՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ Ք̄Ս ՅԻՄ ԱՆՈՒՆ ԱՆ
ԽԱՓԱՆ, ԶՁՐԱՒՐՀՆԷՔ ԱՒՐՆ՝ ՄԱՄՔԱՆԱ՝ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ: ԱՐԴ, ՈՐ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ
ԳԵՂԻ ԿԱՄ ԿՈՊԱՐԻ, ԽԼԵԼ ԵՒ ՀԱՆԵԼ ՅԵԿԷՂԷՑՈՅՍ՝

ԱԶԳԻ ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՂԻՑԻ ԱՌԱՋԻ Ա̄Յ, ԿԱԷՆԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՍՆԱ
ԿԻՑ Է, :ՅԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԷԱԼ ԵՂԻՑԻ. ԵՒ ՈՐ ՀԱՍՏԱՏ
ՊԱՀԷ ԶԱՒԱՆԴՍ՝ ԱՒ[Ո]ՐՀՆԻ Ի Տ̄Է[Ն]:

*Հրատ*. Ջալալյանց, Ա, 112-113, ՎՏ, 64, «Էջմիածին», 1951.
ԺԱ-ԺԲ, 49-50:

***Ծանոթ***. Շինարարանվիրատվական այս արձանագրությունը սկզբնապես փորագրված է եղել Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին՝ դրսից, սակայն, քանի որ այն ծածկվել է գավթի հյուսիսային պատի որմածքով, ուստի, խմբագրական որոշ միջամտություններով, տողերի ընթացքը փոփոխելով, վերափորագրվել է ժամատան որմին: Այսպես, եկեղեցու 4-5-րդ տողերի *սկսա շինել զԲարձրաքաշս վանք եւ գերեզմանատեղ ինձ եւ ամենայն եկեղեցիքս՝ յիմ հալալ արդեանց: Շինեցի* (թե՞ գնեցի) *եւ զԾաղկուտն զիմ հայրենիքն գանձագին արարի* հատվածն էապես փոփոխվել է. *շինեցի զվանքս եւ զամէն եկեղեցիքս յիմ հալալ արդեանց եւ արարի ինձ տուն եւ գերեզմանատեղի եւ զաւակաց իմոց, եւ ազգականաց: եւ զԾաղկուտն, որ էր իմ հայրենիք՝ գանձագին արարի:* Կան և այլ հավելում-ձևափոխություններ՝ ինչպես հարմար են գտել բարեխիղճ տեղափոխողները: Մի «մանրուք» ևս:

Արձանագրությունը փորագրված է պարզ, գեղեցիկ, ընթեռնելի տառերով՝ թեև ֆել-զիտային երեսակալ քարերի որոշ մասեր ջարդվել-թափվել են: Չալալյանցը կատարել է անհարկի միջամտություններ: Նրա գրքում 4-րդ տողի *գՃաղկուտն* գյուղանունը դարձել է *եւ ծնողաց*, 5-ի *ՅՈղջաբերդը՝ Ողծաբերդ*, 6-ի *կոպարը՝ կապար*, 7-ի *եւ որ հաստատ պահէ զաւանդս* (= ընծան)՝ *առինի ի ՏԷ* դյուրընկալ վերջաբանը՝ *և որ հաստատէ առինի դատաստան նորա* և այլն: Գ. Սարգսյանի վերծանությունն անհամեմատ իրական է: Արդ, ինչպես հասկանալ նվիրատվության *եւ զարդարեցի մեծագին եւ պատուական սպասիւք, խաչիւք և մասամբ, եւ գրէնաւք* հատվածը:

Հավանական է, որ, համաձայն ավանդույթի, նվիրատուի ժամանակ վանքի միաբանության, գրիչների, սաների, այլևայլ աշխատավորների պահպանության համար տրվել են գյուղեր, այգիներ, *սպասք, խաչեր, մասունքներ, գրքեր:*

*Սպասքը* եկեղեցական արարողությունների ժամանակ գործածվող անոթներ, զարդեր, սկիհներ, մաղմաղուներ, մյուռոնի ամաններ են, այլ իրեր ու առարկաներ:

*Խաչը* համարվել է հավատքի նշան, այն օգտագործվում է հայ եկեղեցու պաշտամունքի ծիսակարգում և ամենագործածական իրն է: Ուրեմն, խոսքը վերաբերում է թանկ մետաղներից պատրաստված խաչերին:

*Մասունք* ասելով՝ այս դեպքում չպիտի հասկանալ սրբերի մասունքները, այլ՝ պատարագի սուրբ խորհրդի համար պատրաստվող նշխարները, որոնք առատաբար բաշխվում էին հաղորդության ժամանակ:

*Գրենաւք* նշանակում է սուրբ գրքերով՝ Հին և Նոր կտակարանների, մեկնություննե-րի, շարականների, Մաշտոցի, Նարեկի ծեռնարկների ծեռագիր աշխատություններով:

Մամիկոնյանները տիրույթներ են ունեցել նաև Վեդի գետի վերին հոսանքներում՝ Օրբելյանների և Մազազում՝ Պռոշյանների հարևանությամբ: 5-րդ տողի Ողջաբերդ գյուղը Արարատյան դաշտից Գառնիով Ուրծ ընթացող հին ճանապարհի հանգույցներից էր, որտեղ նրանք այգիներ ունեին: Տվյալ դեպքում Մեծ ասելով, նկատի են առել որոշակի մի այգի՝ այլոց հետ չշփոթելու համար: Իբրև ասվածի վկայություն, հիշենք Գողգոթավանքի երկու անթվակիր նվիրագրեր, ըստ որոնց, Մարզպան Մամիկոնյանը յուր չորս զավակներով, միաբանելով վանքին, տվել է *յՈղջաբերդ այգի մի եւ :Ա: գութանի հող* («Դիվան», VI, էջ 85, 92, արձ. 177, 195): Կարելի է կարծել, որ եկեղեցին կառուցվել-ավարտվել է Իվանե Զաքարյանի կենդանության օրոք (1227 թ.):

***811. ԳԱՎԻԹ.*** արևելյան պատի հարավային մասում, արտաքուստ, 6 տող.



:ՈՁԶ: (1237) ԹՈՒ[ԻՆ], ՅԱՌԱՋՆ՜ՈՐԴՈՒԹԵ[ԱՄԲ] ՏԻՐԱՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԵՍ՝

ԱՇՈՏ, ՈՐԴԻ ԳԱՒՐԳԷ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ՎԱՆԻՑՍ ԵՒ ԵՏՈՒ ՅԱ[Ւ]ՍՏՈՒԱ[Ծ]ԾԱԾԻՆՍ :Բ:

(2) ՄԵԾ ԿՌՈԱՎԱՐ ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՎ՝ ՄԻՋՆ-

ՈՐԴՈՒԹ[Ե]ԵԱՄ[Բ] ԱՅ ԵՒ Կ[Ա]ՄԱԿՑՈՒԹ[Ե]ԵԱՄ[Բ] ԵՂԲԱՒՐ ԻՄՈՅ՝ ԱՍԼ[Ա]ՆՍԱ, ԵՒ ՍՊԱՍԱ-

ՒՈՐՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՏՈՒՆ ԻՆՁ :Ի: (20) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԻՐՈՋՆ, ԵՒ :Բ: (2)

ԱՒՐ ԱՍԼԱՆԱ: ԱՐԴ, ԵԹԷ ՈՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ ԳՐԵԼՈՑՍ ԵՒ ՁՀՈ-
ՂՆ ԽԼԵԼ ՋԱՆԱ ԵՒ Հ⌈ԱՆԵԼ Ի ՎԱՆԻՑՍ, ԵՒ ՁԻՄ ՄԻԱ⌉ԲԱՆՈՒԹ⌊ԻՒՆ⌋Ս ԽԱՓԱՆԷ, ՅԻՄՈՑ
ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ՝ ԻՄ ԵՒ ԻՄ ԱԶԳԻ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ Ա̅Յ̅,
ԿԱԷՆԻ ԵՒ ՅՈՒԴԱՒ ՄԱՍՆ-
ԱԿԻՑ ԵՂԻՑԻ, :Յ⌈ ԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈ⌉ՎԵՍՑԻ: ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ ԱՐՆԵՆ
ՁԻՄ ԺԱՄՆ ԵՒ ԱՒՐՀՆԻՆ Յ Ա̅Յ̅ : ԵՒ Ի ՍՐԲՈՑ ՆՈՐԱՅ: ԱՄԷՆ:

*Հրատ*. Ջալալյանց, Ա, 113, ՎՏ, 80 (խիստ կրճատ), «Էջ-միածին», 1951, ԺԱ-ԺԲ, 44, Ոսկյան, Գվ,13 (խառնաշփոթ):

***Ծանոթ***. Սկզբի մասից 2 քար ընկել կորել է, բայց բառերի մնացորդներին և բովանդակությանն ու անձնանուններին ծանոթ լինելով այլ արձանագրություններից, ինչպես և հետևելով Ջալալյանցին (որի ժամանակ քարերը տեղում են եղել), հնարավոր է վերականգնել պակասող մասերը:

Վերևում նկատեցինք, որ Մարծպան Մամիկոնյանի ծոռ, Գաւրգէի և Թաիկի որդի Աշոտի կողմից վանքին տված շնորհների թվում էր նաև *Բ կոռաւար:* Այս դեպքում, սակայն խոսքը վերաբերում է ***Բ մեծ կոռաւար***-ին, ինչը վկայված է նաև Մարծպանի որդի Գրիգորի 1241 թ. նվիրագրում: Նման բնորոշմամբ պարտույթի անհաղորդ է մատենագրությունը, և այն վկայված է միայն Բարձրաքաշ վանքի ԺԳ դարի երկրորդ քառորդի նվիրատվական վիմագրերում:

Հակոբ Մանանդյանը «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» աշխատության «Կոռ» և «պարիհակություն» ենթաբաժնում, խորազնին քննարկելով խնդրո առարկա հարցը, ***կոռը*** համարում է «Հայաստանի տնտեսական կյանքի կարևորագույն խնդիրներից մեկը»[90] և, պատմական տեղեկությունների ու Դսեղի վիմագրերի քննարկումից ելնելով, այն համարում է կալվածատիրոջ (= սեփականատիրոջ) համար ծրի կատարվող «պարտադիր աշխատանք», որի ակունքները հասնում են մարզպանական ու ավելի վաղ ժամանակները և, որը, տևականորեն կիրառվել է նաև զարգացած միջնադարում ու հետագա հարյուրամյակներում:

Հարցը գիտական հազվադեպ բարեխղճությամբ հետազոտող ակադեմիկոսը շրջանցել է (կամ, տվյալ դեպքում, կարևորություն չի տվել ***մեծ*** բառին): Այս և նմանատիպ այլ բնագրերի իմաստը հուսալիորեն բացահայտելու համար հնարավոր չէ շրջանցել ***մեծ***ածականը, որն այս պարագայում ամենևին չի պարփակում ***շատ, ընդարձակ, բազմազան, մեծաքանակ*** իմաստը: ***Մեծ կոռավարը*** ենթադրում է ընտանիքով, գերդաստանով, գյուղովի, համայնքով կատարվող հարկադիր գործ, հարկավոր ծառայություն, որը կարող է առհասարակ վերաբերել ոչ միայն վարուցանքին, հողի կամ այգու մշակմանը, այլև նաև խոտհնձին, ջրատարների, ճանապարհների անցկացմանն ու նորոգմանը, կամուրջների, ամրոցների կառուցմանը, տարերային աղետների կանխման միջոցառումներին և այլն: Կռահելի է, որ նման պարիհակային ծառայությունը շաբաթվա որոշակի օրվան չի վերաբերում, այլ տարեկան երկու օրվան, երկու օրվա ընթացքում կատարվելիք աշխատանքին:

---

[90] Հակոբ Մանանդյան, Երկեր, հ. Դ, Եր., 1981, էջ 107:

Չնայած մյուս ու զուսպ բնութագրումներին, այնուամենայնիվ, նման բովանդակության իրավափաստերը (որոնք չափազանց շատ են) որոշակի կարևորություն ունեն ոչ միայն Մամիկոնյանների ավատատիրական տան կամ Գուգարքում, այլ ողջ երկրում տիրող սոցիալ-իրավական հարաբերությունների, գյուղացիությանը հարկադրվող պարհակային պարտավորությունների դրվածքի ուսումնասիրման առումով:

Այս նվիրագիրը ևս Մամիկոնյան իշխանների ու Բարձրաքաշ Ս. Գրիգոր վանքի միաբանության միջև կնքված գործարքի երկկողմ պայմանագրություն է, իրավական արտոնագիր, որով մի կողմը իր գանձագին թե հայրենիք ունեցվածքից առհավետ շնորհում է վանքին, իսկ մյուս կողմը պարտավորվում է ի հատուցումն պատարագներ կատարել որոշյալ օրերին:

Արձանագրությունը փորագրվել է գավթի կառուցումն ավարտելուց հետո:

*812. ԳԱՎԻԹ.* հարավային պատի արևելյան մասում, արտաքուստ, Նախորդից ներքև, 3 տող.

[illegible]
[illegible]
[illegible]

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ԱՇՈՏ, ՈՐԴԻ ԳԱՒՐԳԷ, ԹՈՌԱՆ ԱՇՈՏԻ, ԵՒ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ՄԱՐԾՊԱՆԱ, ՇԻՆԵՑԱՔ ԶՓԱՅՏԱՇԷՆՆ ԶԿԷՍՆ ՄԷՐ ԵՒ ԿԷՍՆ ՆՄԱ: ԵՍ ԶԻՄ ԲԱԺԻՆՆ ԷՏՈՒ Ի ԲԱՐՁՐԱՔԱՇ՝ ՎԱՍՆ ՅՈԳՈ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ ԽՈՐԻՇԱՅԻ, ԴՍՏԵՐ ԱՒՔԱՆԱ, ԻՒՐ ԿՈՊԱՐՈՎՆ, ԱԶԱՏ ՅԱՄԷՆ ՉԱՐԷ: ԵՒ ԽՈՍՏԱՑԱՆ :Ի: (20) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԻՐՈՋՆ ԱՆԽԱՓԱՆ: ԱՐԴ, ՈՎ ԽԱՓԱՆԵԼ ՋԱՆԱ ՋԻՆՉ ՏՎԵԼ ԵՄ, Յ-ԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ՝ ԱՌՑԷ ՆԶՈՎՍ ՅԱՅ. ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ: ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ ՅԵՏ ԻՐԱՐ ԱՐՆԵՆ ԶԺԱՄՆ, ՈՐԻ ՎԵՐԱ ԳՐԱԾ Է, ԵՒ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

*Հրատ.* Ջալալյանց. Ա. 114, ՎՏ. 80 (կրճատումներով). «Էջմիածին», 1951, Թ-Ժ. 45, Ոսկյան, Գվ. 13:

*Ծանոթ.* Արձանագրությունը գրված է Նախորդի հետ միաժամանակ (1237 թ.). Նույն անձի՝ Գաւրգէի որդի Աշոտի կողմից և կանխամտածված ցուցում է տրվում, որ երկու դեպքում սահմանված 20-ական պատարագները պետք է կատարվեն ոչ թե երկու անգամ, այսինքն՝ 40 ժամ, այլ մեկ անգամ, միասին. *Նոր կիրակէին հետ իրար արնեն զժամն, որ ի վերա գրած է* (որ վերևի արձանագրության մեջ գրված-վճռված է):

Այս դեպքում գրիչը անփույթ է գտնվել կամ որոշ տառեր աչքաթող է արել ու ստիպված ինչ-որ կերպ դրանք կցել է հարակից գրերին, «մոռացել» Ա-երի ստեղնը. Ե-երը հաճախ փոխարինել է-ով և այլն:

Հրատարակիչներին չի հաջողվել հստակել վավերագրի իմաստը, ճշգրիտ բառանջատել և բացահայտել 1-2-րդ տողերի *շինեցաք զՓայտաշէնն. զկէսն մէր եւ կէսն նմա, ես զիմ բաժինն ետու ի Բարձրաքաշս... իւր կոպարովն, ազատ յամէն չարէ* հատվածի պարունակությունը:

***Փայտաշենը*** (փայտ-ա-շեն) անշուշտ տեղանուն է, թերևս փայտե տնակներով, գոմերով, հասութաբեր ձեռնարկություններով շեն, գյուղ, բնակավայր, գոմահանդ, որն իր

որոշակի սահմաններով (=*իւր կոպարովն*) տրվել է վանքին՝ զիջելով պատրոններին (Մամիկոնյան իշխանական տանը) տրվելիք հարկերը (= *ազատ յամէն չարի*)։

Խորիշահի հայրանվան երկրորդ տառն ընկած է երկու քարերի կցվածքում, որի գծապատկերը պարզ չէ, այն մերթ կարդացվել է *Աւագայ* (Ջալալյանց), մերթ՝ *Արքանա* (Սարգսյան)։ Ավելի հավանական է *Աւքանա* կամ *Ուքանա*՝ նկատի ունենալով և վրիպումի, և Ու-ի փոխարեն Աւ-ի երկինչունի կիրառության հնարավորությունը։

***813. ԳԱՎԻԹ.*** արևելյան պատի կենտրոնում, բաց խորանի գլխի կամարի վրա, ներքուստ, 8 տող։



ԹՈ[Ւ]Լ[ԻՆ]

:ՈՂ: (1241)

ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ՄԱՐԾՊԱՆԱՅ, ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆ ՀԱՒՐ ԻՄՈ, ՇԻՆԵՑԻ ԶԳՐԻԳՈՐԱ -
ՇԷՆ[Ս] ԵՒ ԷՏՈՒ ՅԻՄ ՎԱՆՔՍ ԵՒ ԶՍԷՐԵԿԱԳՈՄՈՒՑ ՏԱՓՆ, ԵՒ ԶՄԵԾ
ԿՈՌԱՎԱՐՆ ՅԱԳԱԴԱԿՆ, ԶՓԱՅՏԱՇԻՆՈՒ ԿԷՍՆ, ԶԱՎԱԳ

ՍՔ ՆՇԱՆՆ, ԱՒԵՏԱՐԱՆ, ՊԱՏՈՒԱԿԱՆ ԳՐԵԱՆ ԵՒ ԶԱՐԴ ԷԿԵՂԷՑՈ ԵՒ ԱՅԼ Ա[ՐԴԻՒՆՔ Ի
ԳԱՎԻ]ԹՍ: ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏՆ] ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԷՑԻՆ ԶՄԱՏՈՒՌՆ,
ՈՐ Ի ԲԵՄԻՆ, ՅԱՋՈ ԿՈՒՍԷ, ԱՆԴ ՊԱՏԱՐԱԳ-

ԵԼ Զ ՔՍ ՅԱՆՈՒՆ ԻՄ ԱՆԽԱՓԱՆ: ԱՐԴ, ՈՐ ՀԱԿԱՌԱԿ ԿԱ ԵՒ ԶԻՆՉ ՏՎԵԼ ԵՄ ԽԼԷ ԷԿԵ-
ՂԵՑՈՅՍ ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ՝ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ, ԵՒ ՈՐ Զ-
ԻՄ ԺԱՄՆ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ ՅԱՅ: ԵՒ ԵՍ՝ ԳՐԻԳ[ՈՐ] ....................ԻՆ ԿԷՍՆ ԵՒ
ԶԱՅԳԻՆ ՍԱՄՔԱՆԱ, ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ ԵՒ ՆԱ

ԵՏ ՅԷԿԵՂԷՑԻՍ՝ ԱՌ Ի ՅԻՇԱՏ[ԱԿ ՀՈԳՒՈՅ ԻՒՐՈՅ ԵՒ ՍՊԱՍ]ԱՒՈՐՔ [ՍՔ ՈՒ]ԽՏԻՍ
ՍԱՀՄԱՆԷՑԻՆ Ի ՇԱԲԱԹՆ :Բ: (2) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳԵԼ

Զ ՔՍ ՅԱՆՈՒՆ ՆՈՐԱ: [ԱՐԴ, ՈՐ ՀԱՍՏԱՏ ՊԱՀԷ ԶԱՒԱՆԴՍ՝ ԱՒ]ՐՀՆԻ ՅԱՅ ԵՒ ՈՐ
ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ: ԱՄԷՆ

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 114-115, ՎՏ, 83 (կրճատումներով), «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, 47-48, Ոսկյան, Գվ. 16։

***Ծանոթ.*** Թե ի՞նչ պետք է հասկանալ ***շինեցի զԳրիգորաշէնս*** արտահայտության տակ՝ պարզ չէ. արդյո՞ք դա կարելի է վերագրել (ինչպես կարծվել է) գավթին հավելված խորանին: Հավանական է, սակայն, որ խոսքը վերաբերում է իշխանի կողմից իր անվամբ շինած գյուղին, ծննդարկության: Նույն տողի ***եւ զմեծ կոռավարն յԱգաղակն*** Ջալալյանցը կարդացել է ***և մեծ Կոռավորն Ագատակի,*** Սարգսյանը՝ ***և զմեծ Կոռասարն յԱգաղակի՝*** երկու դեպքում էլ ***կոռավարը*** պետք է դիտել տեղանուն: Սարգսյանը չի նկատել նաև տարեթիվը: Չորրորդ-հինգերորդ տողերի գծագրում բաց մնացած տառաչարքերը կրող քարերն ընկած են տեղում, և ըստ այդմ լրացվել է վերծանությունը: 6-րդ տողի ***եւ ես՝ Գրիգոր ... ին կէսն*** հատվածում Ջալալյանցն ունի ***և Գրիգորս ետու զաւանին կէսն,*** իսկ Սարգսյանը՝ ***և ես Գրիգոր էտու զԱվանին կէսն,*** որը, անհավանական համարելով, չի մտցվել վերծանության շարադրանքի մեջ: 7-8-րդ տողերը լրացվել են՝ հետևելով այլ արձանագրություններին և բառերի մնացորդներին:

Վերևում, 1237 թ. արձանագրության մեջ ասված էր, որ Աշոտը Բ ***մեծ կոռաւար*** է տվել վանքին, իսկ այժմ պարզվում է, որ այդ հողակտորը գտնվում է Ագաղակի հանդամասում, և այն պետք է մշակվեր կոռային եղանակով:

Ի դեպ, այս գյուղը հիշվում է նաև Արցից ու Դսեղից ոչ այնքան հեռու մի խաչքարի 1236թ. արձանագրության մեջ, որը երբեմնի Իգատակն է, Մամիկոնյանների տիրույթներից, այժմ իսպառ անհայտացած:

Նախորդ վիմագրի համաձայն, Փայտաշենը շինել են Աշոտն ու Գրիգորը՝ ***զկէսն մէր եւ զկէսն նմա,*** և Աշոտն իր բաժինը հատկացրել է վանքին, այժմ էլ Գրիգորը, այլևայլ նվերների հետ, Բարձրաքաշին է հրամցնում իր կես բաժինը, և այսպիսով, Փայտաշենն ամբողջովին դառնում է վանքի սեփականությունը:

Անշուշտ, հետաքրքիր է նաև պատվիրանը, ըստ որի, պատարագը պետք է կատարվի ***զմատուռն, որ ի բեմին յաջո կուսէ:*** Բանն այն է, որ հայոց եկեղեցիների բեմին կից ձախ խորանը (= մատուռը) ավանդատունն է, ուր ծեսեր չեն կատարվում, իսկ աջակողմյանը (հյուսիսայինը) մկրտարան է, ուր թույլատրելի է աղոթք հատուկ մարդկանց համար միայն: Ի դեպ, արձանագրության 1-2-րդ տողերի կարևոր մասերը Հավուց թառին նվիրված մենագրության մեջ հրատարակել է Գ. Հովսեփյանը (Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 72), որի հետ ևս կան տարընթերցումներ:

*Գրչագրի առաջին տողում պետք է լիներ ՅԱԳԱՂԱԿՆ (ինչպես վերծանության մեջ) (խմբ.):*

***814. ԳԱՎԻԹ.*** հարավային պատի արևելյան մասում, ներքուստ, որմնախորշի մեջ, ավանդատան դիմաց, 8 տող.

Ի Զ
ՈՂԱ
ՈՂՈՐՄՈՒԹԲՆԱՅԵՍՍԵՎՃԻԾԱ
ՌՍՄԱՐԾՊԱՆԱԵՒԱՄՈՒՍԻՆԻՄԿԱՏԱՇԻՆԵՑ
ԱՔԶՄԱՏՈՒՌՍԵՒԱՅԼԱՐԴԻՒՆՔԵԿԵՂԵՑԻՍ
ՏՎԱՔՖՌԱՑՈՒՎՀԵՒԱՆՔՍԻՌՍԱՑ
ԱՆԸ ԱՐԴԱՏԱԳԵԼՋՔՍՅԱՆՈՒՆՄԵՐԴԻՆՉ
ԷԴԿԱՏԱՒՆԿԱՏՌՉՔՆԱՐՀՆԵԱԼԷ ՂԻՑԻՆ

Ի Թ[ՎԻՆ]
ՈՂԱ (1242)
ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]ԲՆ ԱՅ ԵՍ՝ ՍԵՎՃԻ, ԾԱՌՍ ՄԱՐԾՊԱՆԱ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԿԱՏԱ, ՇԻՆԵՑԱՔ ԶՄԱՏՈՒՌՍ ԵՒ ԱՅԼ ԱՐԴԻՒՆՔ ԵԿԵՂԵՑԻՍ

ՏՎԱՔ: ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏՆ] ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈՍՏԱՑ-
ԱՆ Ը (8) ԱՒՐ ՊԱՏ[ԱՐ]ԱԳԵԼ ՁՔՍ ՅԱՆՈՒՆ ՄԵՐ. :Դ: (4) ԻՆՋ
ԵՒ :Դ: (4) ԿԱՏԱԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԵԱԼ ԵՂԻՑԻՆ:

Հրատ. Զալալյանց. Ա, 115-116, ՎՏ, 142 (դրված է 1204 թ տակ), «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 46, Ոսկյան, Գվ. 14:

*Ծանոթ.* Հետագայում ամբողջովին ծածկված է եղել ծեփով և վրան կարմրադեղով ուրիշ արձանագրություն է գրվել, որի հետքերը տեղ-տեղ մնացել են: Հիշատակված *ՄԱՏՈՒՌԸ* դիմացի ավանդատունն է, բեմին հյուսիսից կից խորանը, որ շինվել է Սեվճիի ծախսով, և որում պատարագ պիտի տրվեր Մարծպանին: Զալալյանցը բաց է թողել տարեթիվը, *Սեվճին* կարդացել է *Մանածի*, վերջին բանաձևումը «խմբագրել» է *կատարիչք սորա աւրհնին Աստուծոյ: Շինեցաք զմատուռս և այլ արդիւնք յեկեղեցիս տվաք* արտահայտությունից չպիտի եզրակացնել, թե շինարարությունն ընթացքի մեջ էր 1242 թ.: Արձանագրությունը գրվել է ավարտից հետո:

*815. ԳԱՎԻԹ.* նախորդի անմիջական տակը, 6 տող.

ՈՂՈՐՄՈՒԹԲՆ ԱՅԵԿԱՄԱԿՑՈՒԹԲԻՄՊԱ . . .
ԻՆԳՐԻԳՈՒԵՍԱՐՂԱՆՈՐԴԻՍԵՎՃԵԵԱՄՈՒՍԻ . . .
ՄԱՄՄԻԱԲԱՆԵՑԱՔՍԲՈՒԽՏԻՍԵՏՎԱՔԿԴԷ . . .
ԱՌԱՋՆՈՐԴՍԲՈՒԽՏԻՍԵՐԵՄԻԱԵԱՅԼՍՊԱՍ . . .
ԷՏՈՒՆԴԱՒՐՊԱՏԱՐԱԳԽԱՉԳԻՒՏԻՆԲԵ . . .
ՂԱՆԻՄԱՂԲԵՐՆ=Ա=ԻՆՋ=Ա=ԱՄԻՆԿԱՏԱՐԻ

ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]ԲՆ ԱՅ, ԵՒ ԿԱՄԱԿՑՈՒԹ[ԵԱՄ]Բ ԻՄ ՊԱ[ՏՐՈՆԻ]
ԻՆ՝ ԳՐԻԳՈՐԻ, ԵՄ՝ ԱՐՂԱՆ, ՈՐԴԻ ՍԵՎՃԷ, ԵՒ ԱՄՈՒՍԻ[Ն ԻՄ]
ՄԱՄԱ, ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ՏՎԱՔ :Կ: (60) ԴԻ[ԿԱՆ:]
ԱՌԱՋՆՈՐԴ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՐԷՄԻԱ ԵՒ ԱՅԼ ՍՊԱՍ[ԱՒՈՐՔ]
ԷՏՈՒՆ Դ ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԽԱՉԳԻՒՏԻՆ: Բ: (2) Ե . . .
ՂԱՆԻՆ՝ ԻՄ ԱՂԲԱՒՐՆ, :Ա: (1) ԻՆՋ :Ա:ՄԱՄԱԻՆ ԿԱՏԱՐԻ:

Հրատ. Զալալյանց, Ա, 116, «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 46, Ոսկյան, Գվ. 15:

*Ծանոթ.* Նախորդի նման ծածկված է եղել ծեփով: Սկզբի հինգ տողերի վերջին 3-4 տառերը չեն փորված, լրացվում են ըստ կարմրադեղով գրվածի: Երեմիա առաջնորդը, հավանաբար, արձանագրության մեջ հիշատակվածն է՝ մահացած 1256 թվին:

Գ. Սարգսյանի մոտ առկա են 4-րդ տողի *Երեմիա եւ այլ սպասաւորք*-ի փոխարեն *Երէմիա և միաբանք*, 5-6-րդի *Ե...ղանին՝ Գեղանին* տարընթերցումները: Իսկ Զալալյանցն ուղղակի անկաշկանդ է վարվել. նա *իմ պատրոնին* կարդացել է *իմ պապին*, *ՍԵՎՃԷ-ն՝ Աւիրծէի*, դուրս է ձգել *Մամա-ն*, *:Կ: (60) դէկան*-ը կարդացել է *Կոէվանն*, *Երեմիա եւ այլ միաբանք*-ը՝ *Աւրիմիս և միաբան սպասաւորք*, բոլորովին անհասկանալի է *Բէղանին իմ եղբաւրն ինձ ամ ամի կատարել:* Հնարավոր է, որ նախորդի պես, վերջին նախադասությունը լինի՝ *կատարիչքն աւրհնեալ եղիցին:*

*816. ԳԱՎԻԹ*. արևելյան պատի հյուսիսային կեսում, արտաքուստ, 6 տող.



ԹՈՒ[ԻՆ]
ՈՂԴ (1245):
Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏԻ], ԵՍ՝ ԱՍԼԱՆԲԷԿ, ՈՐԴԻ ՄԱՐԾՊԱՆԱ, ՇԻՆԵՑԻ Զ:Բ: (2) ՄԱՏՈՒՌՆՍ, Զ:Ա: (1) ՅԱՆՈՒՆ ՄԼՔԱՆԱ՝ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ, ԵՒ ԵՏՈՒ Զ...
ԵՒ :Ժ: (10) ԴԵՀԵԿԱՆ ՏԱՐԵՆՆ ՅԱԿՈՒԽԱԲՈՅՍ ԵՒ ՄԵԾԱԾԱԽ ԱՒԵՏԱՐԱՆ ՈՍԿՈՎ ԵՒ ՄԱՐԳԱՐՏՈՎ ԵՒ ԱԿԱՄ[Բ]Ք ՊԱՏՈՒԱԿԱՆԱՒՔ ԶԱՐԴԱՐԱԾ: ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԱՐՁԱՆ[Ա]Գ[ՐՈՎ]
ԱՆԽԱՓԱՆ ՄԻՆՉ Ի ԳԱԼՈՒՍՏՆ ՔԻ: ԱՐԴ, ԷԹԷ ՈՔ ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ ՀԱԿ[Ա]Ռ[Ա]ԿԱ ԼԻՆԻ ԱՅՍՄ ԳՐՈՅ ԵՒ ՈՉ ՏԱՅ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՏԱՐԱԳՍՆ, ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ Ի ԹԻ ԵՒ ՅԱՅՍ ԵՒ ՅԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ՆՈՐԱ: ԱՄԷՆ:

Հրատ. Ջալալյանց, Ա, 108. ՎՏ, 88-89 (կրճատ). «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 45. Ոսկյան, Գվ.12-13:

*Ծանոթ*. Տողերի վերջից մեկ քար ընկած-կորած է:
Երկու մատուռներ ասելով՝ նկատի ունի գավթի բեմի երկու կողմերի ավանդատները:

*817. ԳԱՎԻԹ*. հարավարևելյան ստորին ավանդատան մուտքի գլխին, շարունակված նույն մուտքի ճակատաքարին և շուրջը, 6 տող.



ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ԵՂԲԱՅՐ ՏՆ ՀԱՍՄ[Ա] ԶԱՍՊԱ,]
ԱՌԱՋՆՈՐԴԻ ՍԲ, ՈՒԽՏԻՆ ՀԱՂ[Բ]ԱՏԱ, ՄԻԱ[-]
ԲԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ ՇԻՆԵ[Ց]Ի ԶՄԱՏ[-]
ՈՒՌՆՍ ԱՐԴԵ[ԱՄ]Բ ԻՄՈՎ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ
ԽՈՍՏԱՑԱՆ [Ի]ՆՁ Զ (6) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՍԲ ԳՐԻ-
ԳՈՐԻ ԱՂՈՒՀ[Ա]ՑԻՑՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Ի ՔԷ: ԱՄԷՆ:

Հրատ. «Էջմիածին», 1951, Թ-Ժ, 44. Ոսկյան, Գվ. 14:

*Ծանոթ*. Առաջին երեք տողերի վերջին քարերն ընկած-կորած են: Այստեղ *մատուռնս* կոչվածները գավթի ավանդատներն են. դրանք կրկնահարկ են: Այս արձանագրությունը փորագրված է ստորին հարկի մուտքի գլխին և վերաբերում է դրա շինությանը, իսկ վերևի հարկը շինել է, ըստ նախորդ արձանագրության՝ Ասլանբեկը: Հետևաբար նույն ժամանակն է՝ 1245 թ.:

***818. ԳԱՎԻԹ***. արևելյան պատի հարավային մասում, արտաքուստ, 6 տող.



Ո
ՂՁ (1247)

Ի ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ ՀԱ[Յ]ՈՑ, ԵՒ ՅԻՇԽԱՆՈՒԹԵ[ԱՆ] ՏԻԷԶԵՐԵԿԱԼ ԻՇԽԱՆԱՑ ԻՇ-
ԽԱՆԻ ԱՒԱ[Գ]ԻՆ, ՈՐԴՈՅ Ա[Թ]ԱՊԱ[Կ]
ԻՒԱՆԷԻ, ԵՍ՝ ՊՌՈՒՇ, ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ ԵՒ ԹՈՌՆ ԽԱՂԲԱԿԱ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ՄԲ ՈՒԽՏԻՍ
ԲԱՐՁՐԱՔԱՇԻՍ ԵՒ ԷՏՈՒ Ի ՇԻ[Ն]-
ՈՒԹԻ[ՒՆ] ՏԱՆՍ :ԳԾ: (300) ԴԵԿԱՆ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՄԲ ՈՒԽՏԻՍ ՍԱՀՄԱՆԷՑԻՆ :Ա:
(1) ՔԱՌԱՍՈՒՆՔ Ի ՏԱՐՈՋՆ: ԱՐԴ, ՈՎ ԽԱՓԱՆԷ ՁԳՐ-
ԵԱԼՍ ԵՒ ԿԱՄ ՉԱՐՆԷ ՁԻՄ ԺԱՄՆ՝ ԴԱՏԻ ՅԱՅ, ԵՒ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ
ԱՅ:

*Հրատ*. Ջալալյանց, Ա, 112, «Արձագանք», 1885, 20, ՎՏ, 91 (կեսը), Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, 10, «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 50, Ոսկյան, Գվ, 16-17:

***Ծանոթ***. 1247 թվականին վանքի բոլոր շինությունները կառուցված էին, ուստի այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե շինարարությանը, այլ շինությանը, բարեզարդարմանը, հոգսերի բավարարմանը: Հազիվ թե մի այլ դեպքում Ավագ Զաքարյանը նման՝ ***տիեզերակալ իշխանաց իշխան*** մեծարման արժանացած լինի: Հինգերորդ տողի ոչ այնքան հստակ և մասամբ եղծված ***:ԳԾ: դէկան*** (=դահեկան): ***Եւ սպասաւորք մբ ուխտիս սահմանէցին :Ա: քառասունք ի տարոջն: Արդ, ով խափանէ*** հատվածը Ջալալյանցը կարդացել է ***ԽԵ դահեկան և սպասաւորք սուրբ ուխտիս սահմանեցին պատարագ աւագ աւուրք արդ ով խափանէ,*** իսկ Արգսյանը, նկատելով գրչի վրիպումները, դրանք շտկելու անհաջող փորձ է կատարել՝ ***:Ճ: դէկան և սպասաւորք մբ ուխտիս սահմանեցին :Ա: քսան աւր ժամք ի տարոջն արդ ով խանէ:*** Ցավոք, նա չի նկատել, որ արձանագրությունն անվրեպ վերծանել է Գ. Հովսեփյանը, առաջարկել տառաշարքը ուղղել և կարդալ ***քառասունք***, բայց հատուցած դրամը նա ևս դիտել է :Ճ: դէկան:

Պռոշ իշխանը միջնադարի ականավոր քաղաքական, ռազմական գործիչներից է, Գեղարդավանքի առաջին հարկի ժայռափորերի կառուցողը:

***Նախավերջին տողի վերը հիշված խնդրահարույց հատվածը իրոք տարակարծության տեղիք է տալիս: Ք-ից հետո փորագրված տառը կարելի է կարդալ Մ (կիսակլորի աջ փոքր ստեղնը ավելի շուտ կոտրվածքի փոսիկի է նման): Այնուհետ գրված է Ս. հետո Ն, Մ կցագիր (Ս-ի ձախ ուղղահայացի վերին մասում որոշակի Ն-ի վերին կորն է), հետո Ա է, որի աջ ուղղահայացին կարող էր Ի-ի փոքր հորիզոնականը կցված լինել: Արան***

*հաջորդում են ՈՒ, Ր տառերը: Ր-ի կորի տակ մի անորոշ տառ է, իսկ հետո՝ Ք: Այս Ք-ի և ՏԱՐՈՋՆ բառի միջև կցագիր է՝ ձախ կարճ ուղղահայացով Ա, որի աջ ուղղահայացին վերևից կցված է Ա-ի վերին կարճ հորիզոնականը, իսկ միջնամասում՝ Ի-ի փոքր կիսակլոր ստեղնը: Այսպիսով, մեր դիտարկմամբ՝ սկիզբը կարելի է կարդալ ՔՍԱՆ (ինչպես Սարգսյանը), այնուհետ ԱՒՈՒՐՔ, հետո ԱՄԻ: Ի դեպ ԱՄԻ-ն տեղ է գտել նաև Բարխուդարյանի վերծանության մեջ՝ ՔԱՌԱՍՈՒՆՔ ԱՄԻ ՏԱՐՈՋՆ (խմբ.):*

***819. Գավիթ.*** արևմտյան պատի հարավային մասում, ներքուստ, որմնախորշից ձախ, 6 տող.



Ի ԹՈՒԻ⌊Ն⌋ :ՈՂԹ: (1250), ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ⌊ԱՄԲ⌋ ՏԻՐԱՑՈՒ Վ⌊ԱՐ⌋Դ⌊ԱՊԵՏԻՆ⌋, ԵՍ ԽԱՓԼԱՆ ԵՒ ԿԵՆԱՅ-
ԿԻՑ ԻՄ ԹԱՄԱՐ, ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ, ԸՍՏ ԿԱՐԻ ՄԵՐՈՒՄ, ԱՒԳՆ-
ԵՑԱՔ ՏԱՆՍ ԵՒ ՏՎԱՔ ՁՄԵՐ ՅՈԳՈՅ ԲԱԺԻՆՆ Ի ԳԱՒԻԹՍ ԵՒ
ԵՏՈՒՆ ՄԵԶ :Է: (7) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՐՈՋՆ՝ Ի ՏԱՒՆԻ ԽԱՉԳԻՒ-
ՏԻՆ: ԱՐԴ, ՈՐ ՉԱՌՆԷ ՁՄԵՐ ԺԱՄՆ՝ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱ-
ՋԻ ԱՅ, ԵՒ ՈՐ ԱՌՆԷ՝ ԱՒՐՀՆԻ ՅԱՅ ԵՒ ՅԻՒՐ ՍՐԲՈՑՆ: ԱՄԷՆ:

*Հրատ.* Ջալալյանց. Ա, 116-117, ՎՏ, 93, «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 47, Ոսկյան, Գվ.15:

***Ծանոթ.*** Տիրացու վարդապետի առաջնորդության վերջին տարին է:

***820. ԳԱՎԻԹ.*** արևելյան պատի հարավային մասի որմնախորշի մեջ, ներքուստ, 14 տող.



Ի ԹՈՒ⌊ԻՆ⌋
ՈՂԵ (1246),
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ⌊ԱՄԲ⌋ ՏԻՐԱՑՈՒ Վ⌊ԱՐ⌋Դ⌊ԱՊԵՏ⌋ԻՆ, ԵՍ՝ Ք-
ՈՒՐԴ, ՈՐԴԻ ԳԱՒԿԱՒՆ, ՅԻՄ ՏԱՊԱՆԱՏԱՆԷ-
Ն Ի ԴՈՒՍ ԵԿԻ՝ Ի ՍԱՆԱՀՆԷՆ, ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱ ԲԱՐ-
ՁՐԱՔԱՇԻՍ՝ ԿԱՄԱԿՑՈՒԹ⌊ԵԱՄ⌋Բ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ԱՍԼԱՆՊԷԿԱ, ՈՐ-

ԴՈՑ ՄԱՐԾՊԱՆԱ: ԵՒ ԸՍՏ ԿԱՐԻ ԱՒԳՆԵՑԻ ՇԻՆՈՒԹԵ[ԱՆՆ]
ՏԱՆՍ, ԵՒ ԱՐԱՐԻ ԻՆՁ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ. ԵՒ ԱՅԼ ԶԻՆՉ Ո-
ՒՆԻՄ, ՅԵՏ ԻՄ ՅԱՆՑՄԱՆ, ԱՅՍ ԵԿԵՑԵՑՈՅՍ ԼԻՆԻ ՎԿԱ-
ՈՒԹ[ԵԱՄ]Բ ԱՅ ԵՒ ՄԱՐԴԿԱՆ՝ ԱՍԼԱՆՊԵԿԱ ԵՒ ԳՐԻԳՈՐՈ, ՅԱՄԼԿԱ ԵՒ
ԱՇՈՏՈ: ԱՐԴ, ՈՎ ԱՅՍ ԳՐԵԼՈՑՍ ՅԱԿԱՌԱԿ ԿԱ ԵՒ ԽԱՓ-
ԱՆԵԼ ՋԱՆԱ՝ ԻՄ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ, ԿԱ-
ԵՆԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՂԻՑԻ: ՅԻՆԱՆՑ ԱՌ-
ՆԵՆ ԶԻՄ ԺԱՄՆ ԵՒ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ: ԱՄԷՆ:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 114, ՎՏ, 89 (կրճատումներով), «Էջ-միածին».1951, ԺԱ-ԺԲ, 45, Ոսկյան, Գվ. 14:

***Ծանոթ***. *Գավաին* պետք է լինի *Գաւրկաին*, գրիչը մոռացել է Ա-ի աջ ստեղնին փորագրել Ն: Միջնադարյան Հայաստանում վանքերին միաբանում էին՝ տալով հատուկ նպաստ՝ ինչք, դրամ, հող, այգի, անասուն, նվազագույնը 20 դահեկան (շուրջ 100 գրամ ոսկի) արժողությամբ: Նվիրատվության անվան տակ նման չպարտադրվող տուրք (անդամավճար) տալիս էին մեղքերի քավարան, մերձավորների հիշատակների հավերժացման, պատարագներ կատարելու նպատակով: Պատահում էր նաև, որ հատկապես անժառանգ մնացողները իրենց մահից հետո միաբանած կենտրոնին էին ժառանգում իրենց ողջ ունեցվածքը, ինչպես այս դեպքում Քուրդը ըստ կարի օգնում է վանքի շինությանը և Մամիկոնյան իշխանների վկայությամբ հաստատագրվում է. ***եւ այլ զինչ ունիմ, յետ իմ անցման*** (= մահվանից հետո), ***այս եկեղեցոյս լինի:***

***821. ԳԱՎԻԹ.*** արևմտյան պատի հարավային մասում, լուսամուտի տակ, ներքուստ, 5 տող.

ԱՅՍԱՐՁԱՆԱ ; ԷՅԱՆՈՒՆՄԻԱԲԱՆԱՑՈՐՔՅՈՒՍՈՎՆԱՅՄԻԱԲԱՆԵՑԱՆԵՒԳՈՒԻՉԱՓԱԻԳՆԵՑԻՆԻՇԻՆՈՒԹԻՆՏԱՆՍ
ԵՄԵՔՍՊԱՍԱՒՈՐՔՄԲՈՒԽՏԻՍԸՆԿԱԼԵԱԼՋՅՈՅՍՆՈՑԱԽՈՍԱՑԱՔՊԱՍՏԱՐԱԳԵԼՉՔՍԸՍՏԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԱՆՈՒԱՆ=Ա=ԱՒՐ
· ԱՐԿԱՒԱԳԻՐԻՑՈ ԱԻՐԿԻԿԱՒՆԵԿՆՈՋԻ · · ՑԱԴԵՂԻՆԵՒԽԱԹՈՒՆԿԱՆՆ=Բ=ԱՒԽԱՉՈՒՏԻՆԵԱՄՈՒՍՆՈՒԻՐՈ=Ա=ԱՒԽԱՉԱՏՐՈ
· · · · ԱԱՒՐԱՇՈՏՈԱՒՐ ՍԵԴԱՆԱՅՆ =Բ=ԱՒՐՁԼՈՒՊԻՆՈՐԴՈՀԵՐԻՔԻ · · · · · · · · · · · · ԳՍԻ ԲԱԹԵՆ
· · · · · · · ՈՐՔԱՀԱՆԱՒ = Ա=ՍԱՌԱ ԲՉԱՉԻՆԵՇՈՒՇԼ · '' · · · · · · · · · · · · · · · · · ·

ԱՅՍ ԱՐՁԱՆԱ[ԳԻՐ] Է ՅԱՆՈՒՆ ՄԻԱԲԱՆԱՑ, ՈՐՔ ՅՈՒՍՈՎՆ ԱՅ ՄԻԱԲԱՆԵՑԱՆ ԵՒ ԳՈՒԻ
ՉԱՓ ԱՒԳՆԵՑԻՆ Ի ՇԻՆՈՒԹԻ[ՒՆ] ՏԱՆՍ:
ԵՒ ՄԵՔ՝ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ, ԸՆԿԱԼԵԱԼ ՁՅՈՅՍՆ ՆՈՑԱ, ԽՈՍՏԱՑԱՔ ՊԱՏԱ-
ՐԱԳԵԼ Ձ ՔՍ ԸՍՏ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՈՒԱՆ :Ա: (1) ԱՒՐ
[Մ]ԱՐԿԱՒԱԳ ԻՐԻՑՈ, :Բ: (2) ԱՒՐ ԿԻԿԱՒՆ ԵՒ ԿՆՈՋ Ի[ՒՐՈ ԽՈ]ՑԱԴԵՂԻՆ ԵՒ ԽԱԹՈՒՆ-
ԿԱՆՆ, :Բ: (2) ԱՒՐ ԽԱՉՈՒՏԻՆ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԻՒՐՈ, :Ա: (1) ԱՒՐ ԽԱՉԱՏՐՈ
. . . . . . . ., :Ա: (1) ԱՒՐ ԱՇՈՏՈ, :Ա: (1) ԱՒՐ ՍԵԴԱՆԱՅՆ . . . :Բ: (2) ՁԼՈՒՊԻՆ՝ ՈՐԴՈ
ՀԵՐԻՔԻ[Ն] . . . . . . ՍԱՐ]ԳՍԻ [ՇԱ]ԲԱԹԵՆ
. . . ՈՐ ՔԱՀԱՆԱՒ, :Ա: (1) ՍԱՌԱ[ԻՆ]:Բ: (2) ՁԱՉԻՆ ԵՒ ՇՈՒՇ[ԱՆԻՆ] . . . . . . . . . . . . . :

*Հրատ.* «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, 47, Ոսկյան, Գվ. 15:

***Ծանոթ***. Ցավոք, նվիրագրի զգալի մասը եղծված-հողմահարված է, և հնարավոր չէ աներկբա պարզել նվիրատուների և պատարագաժամերի թիվը: Սակայն, տեքստերից ելնելով, կարելի է եզրակացնել, որ միաբանողները եղել են շուրջ 20 հոգի, և ամեն մեկի համար (=***իւրաքանչիւր անուան***) տրվել է տարեկան մեկ պատարագ: Նկատի ունե-

նալով, որ մեկ պատարագ տրվել է 20 դահեկանի դիմաց (այսինքն 1 պատարագաժամն արժեցել է 20 դահեկան), հետևաբար ամբողջ գումարը կազմել է 400 դահեկան (20x20), ուստի *գոխ չափ* (եղածի, հնարավորության սահմաններում) ***տան*** (աստծո տան, աղոթքի տան) շինարարության օգնության համար նվիրված գումարը (նյութական աջակցությունը) եղել է 1800 գրամ ոսկի (400 դահեկան x 4,5 գրամ՝ 1 դահեկանի արժեքը):

Նյութա-տնտեսական հնարավորությունների մասին վկայող նման գործարքը ենթադրում է հատուցում դրամով, բնամթերքով կամ այլ ծառայությամբ:

Սարգսյանի մոտ բացթողումներն ու վրիպումները ավելի քան զգալի են:

Արձանագրությունը կարելի է թվագրել նախորդի ժամանակով:

*Գրչագրում ՍԵՂԱՆԱՑՆ բառից հետո առկա են պատիվ նշանով Ա և Ի տառերը (խմբ.):*

*822. ԳԱՎԻԹ.* հարավային պատի կենտրոնում, որմնախորշի մեջ, ներքուստ, 6 տող.



Ի Թ[ՎԻՆ]
ՈՂՋ (1247),

ԵՍ՝ ՍՈՒՄԲԱ[Տ], ՈՐԴԻ ՍԱԼԱՐԻՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱ ՄԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ, ԸՍՏ Կ-
ԱՐԻ, ԱՒԳՆԷՑԻ ՏԱՆՍ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ՝ ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ] ԵՒ ՄԻԱ-
ԲԱՆՔՍ, ՍԱՀՄԱՆԷՑԻՆ :Ի: (20) ՊԱՏԱՐԱԳ ԻՆՁ Ի ՏԱՐՈՋՆ: ԱՇՆԱՆ ՔԱՌ-
ԱՍՆԱՄՏԻՆ ԱՐՆԵՆ ՁԻՄ ԺԱՄՆ ԵՒ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ ԵՒ Ի ՍՐԲՈՑ ՆՈՐԱ:

*Հրատ.* Ձալալյանց. Ա. 116. ՎՏ. 91. «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 46:

*823. ԳԱՎԻԹ.* հարավարևելյան սյան խոյակին, երեսով արևմուտք. 5 տող.



ԿԱՆԿՆԵՑԱՒ ՍԻՒՆՍ ԵՒ ՍԲ ՆՇԱՆՔՍ ՅԻՇ-
ԱՏԱԿ ՅՈՀԱՆՆԷՍ ՄԻԱԿԵՑԻՆ: ՈՐՔ
ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ԱՍԱՑԷՔ ՏՐ
ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՆՄԱ:
ԱՄԷՆ:

*Հրատ.* Ձալալյանց. Ա. 115. ՎՏ. 142 (1204թ. տակ). «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, 49:

***Ծանոթ.*** Սյունը և սուրբ նշանները, որը խոյակից վեր ագուցված որմնախաչն է, շինված են Յոհաննեսի ծախսով: Ժամանակակից է շինությանը:

***824. ԳԱՎԻԹ.*** հյուսիսարևմտյան սյան խոյակին (որն այժմ ընկած է), 5 տող.



ԿԱՆԿՆԵՑԱՒ ՍԻՒՆՍ ԵՒ ՄԲ ՆՇԱՆՔՍ ՅԻ-
ՇԱՏԱԿ ՀԱՄԼԿԱՆՆ ԵՒ ՄԱՄՔ-
ԱՆԱ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ
ԱՍԱՑԵՔ ՏՐ ԱԾ
ՈՂՈՐՄԵԱ ՆՈՑԱ:

***Հրատ.*** «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 49:

***Ծանոթ.*** Մամիկոնյան իշխանն ու կինն են շինարարության նպաստավորողները:

***825. ԳԱՎԻԹ.*** արևմտյան պատի հյուսիսային կեսում, մուտքից հյուսիս, կամարից աջ, ներքուստ, 3 տող.



ԵՍ՝ ՄԱԼԻՔԱ, ԴԱԵԱԿ ԽՈՐԻՇԱՀԻ, ԴՍՏԵՐ ՄԱՐԾՊԱՆԱ, ՄԻԱՅԲԱՆ-
ԵՑԱ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔՍ ԵՏՈՒՆ ԻՆՁ :Բ: (2) ԱՒՐ ՊԱ-
ՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 110, ՎՏ, 142 (1204 թ.), «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 47, Ոսկյան, Գվ.15-16:

***Ծանոթ.*** Խորիշահը մարզպան Մամիկոնյանի և Մամքանի դուստրն է և նպաստ է բերել շինարարությանը: Հիշատակագիրը գրված է անսխալ, գեղագիր ու համաչափ տառերով: Սկզբնամասը Ջալալյանցը սխալ է վերծանել՝ ***Ես Ամլեք դաիեակ:***

***826. ԳԱՎԻԹ.*** արևմտյան պատին, ներքուստ, նախորդի մոտ, 7 տող.



ԹՈՒ[ԻՆ]
ՈՉԹ (1240):
Յ[ԱՆՈՒՆ ԱՅ ]ԵՍ՝ Ա[ՄՍԼԱՆԲԵԿ Ե]Ւ ԵՂԲ[ԱՒՐ ....

... ԱՐԱՄ [Տ]ՈՒԱԲ Բ̅ (2) . . . . . . . .ՅԷ. . . . .

... Ա ԵՒ . . . ՍՊԱՍԱՒՈՐԲ[Ս ԵՏՈՒՆ ԻՆՉ]: Ա̅ (1) ԱՒՐ ՁԵԿ[ԵՂԵՑՈՅՍ

Ի ՏԱՒՆ ]Ի ՅՈՀԱՆՆՈՒ ԵՒ ՅԱԿՈ[ԲԱ . . . . ՄԵՐ . . . [ԿԱՏԱՐԻՉԲ-

ԲՆ ԱՒ ]ՐՀՆԻՆ ՅԱ̅Յ̅ : ԱՄԷՆ:

*Դիվան. «Էջմիածին»*, 1951, Թ-Ժ, 44:

***Ծանոթ.*** Սարգսյանը հրատարակել է միայն թիվը, իսկ «հողմահարված ու ջարդված» արձանագրությունը նշել է «Մեծ եկեղեցու հարավային պատի վրա, արևմտյան անկյունում, ժամատան մեջ բացվող որմնախորշում»: Նվիրագիրն իսկապես խիստ հողմահար է, կենտրոնի քարն իսպառ ոչնչացած, լրիվ վերականգնել հնարավոր չէ:

*Երրորդ տողը կարելի է լրացնել ԵՂԲ[ԱՐ ԻՄ ԳՐԻԳՈՐ], չորրորդ տողը՝ [ՄԻ ]ԱԲԱՄ[Ե-ՑԱՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ Տ]ՈՒԱԲ: Հինգերորդ տողում ոչ թե ԵՏՈՒՆ ԻՆՉ, այլ [ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՄԵՉ], քանի որ կոտրված-ջնջված հատվածը շատ ավելի լայն տարածք է ընդգրկում, և նվիրատուները երկուսն են (խմբ.):*

*827. ԳԱՎԻԹ.* Նախորդի անմիջական շարունակությունը՝ նրա վերջին տողից սկսած, 3 տող.

ԵՍ՝ ՍԱԼԻ[ՔԱ, ԴԱԵ-

ԱԿ ԽՈՐ ]ԻՇԱՀԻ, ԴԱՏԵՐ ՄԱ[ՐԾՊԱՆԱ, ՄԻԱԲ ]ԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑ[Ո

Յ ]Ս ԵՒ ՍՊ[ԱՍԱՒ ]ՈՐՔՍ ԷՏՈՒՆ [ԻՆՉ] :Ա: (1) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ՅՈ[ ԻՓՍ ]ԻՄ

[ԵԱՆՑ]: ԿԱՏԱՐԻՉՔՆ Ա[ ՒՐՀ ]ՆԻՆ ՅԱ̅Յ̅ : ԱՄԷՆ:

***Ծանոթ.*** Թվում է նախավերջին արձանագրության կրկնությունն է, բայց ունի փոքր տարբերություն՝ առաջինում ստացել է երկու, այս դեպքում՝ մեկ պատարագ: Հավանաբար Մալիքան երկու անգամ է նվիրատվություն կատարել և երկու անգամ էլ պատարագ է սահմանել նույն տոնին՝ մեկ անգամ կատարելու նպատակով:

*828. ԳԱՎԻԹ.* ութ քարերի վրա.

ԷՅԹԱԹԱՆՉՐԻՑԾԱՓԱՅԵ··| ··ԵԼԻՅՄՆՉԷՅԱԷՄՌՏՍԷՅԻՇԽ··|
ՀԱՌՑԵՎՐԱՅԵՐԿՌՑԵՂ| ԲԱՑԻՆՓՆԱԿԱԼԱՑԱԱԳԻՆ|
ԷՇԱՀՆՇԱՀԻ| ՍԿԻՋԲՆՇԻՆՈՒԹԵՏԱՆՍԵՂ| ԵՒԵՂ·| ·ՐԴՐ

[Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՅՈՐՈՒՄ ՏԻՐ]ԵՑ ԹԱԹԱՐՆ ՉՈՐԻՑ Ծ̅Ա̅Գ̅Ա̅Ծ̅ Ե[ՐԿՐԻ

ՅԱՐԵՒ]ԵԼԻՑ ՄԻՆՉԵ ՅԱՐԵՒՄՈՒՏՍ, ԵՒ

ՅԻՇԽ[ԱՆՈՒԹԵԱՆ] ՀԱ[Յ]ՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԵՐԿՈՒՑ ԵՂԲԱՐՑ

ԻՆՔՆԱԿԱԼԱՑ ԱՒԱԳԻՆ ԵՒ ՇԱՀՆՇԱՀԻ՝ ՍԿԻԶԲՆ

ՇԻՆՈՒԹԵ[ԱՆ] ՏԱՆՍ ԵՂԵՒ Ի ՆԵՂ [ԵՒ ԴԱՌՆ ԺԱՄԱՆԱԿԻ]

. . . . ՐԴՈՐ . . . :

***Ծանոթ.*** Բեկորները դասավորված են գավթի մեջ: Գծագրությունը կատարել է աշխատանքների մասնակից, հնագետ Ա. Քալանթարյանը:

Այս արձանագրությունը իրապես չափազանց կարևոր է պատմական առումով, քանզի հայերեն բազմահազար վիմագիր հիշատակագրերը սովորաբար ավելի քան գործնական բնույթ ունեն, սակավախոս ու ժլատ են քաղաքական իրողությունների, արտաքին թշնամիների արշավանքների, միջավատական գզվռտոցների, տարերային աղետների նկատմամբ: Այս դեպքում, սակայն, բազում զրկանքներով ազատություն ու անկախություն ձեռք բերած երկրի նորեն բռնադատման ու ստրկացման դառնագին ցավը չի թաքցվել: Կ. Գանձակեցու «Պատմությունից» և մի հիշատակարանից հայտնի է, որ մոնղոլ Չարմաղանի զորապետ Չաղատա նոյինը Գուգարքը նվաճել է 1236 թ. ամռան սկզբում: Սույն արձանագրության վկայությամբ՝ գավիթը հիմնադրվել է *ի ժամանակի, յորում տիրեց թաթարն չորից ծագաց երկրի . . . սկիզբն շինութեան տանս եղեւ:* Վստահաբար կարելի է ասել, որ Բարձրաքաշի վանքի գավիթը հիմնարկվել է 1236 թ. գարնան վերջերին, ինչն ընդունված էր շինարարական խոշոր ձեռնարկումների դեպքում:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ Զաքարեի և Իվանեի որդիներ Ավագն ու Շահնշահը համարվում են հայոց ու վրաց ինքնակալ իշխանավորներ:

*Ցավոք, ծանոթության մեջ նշված չէ յուրաքանչյուր քարին եղած տողերի քանակը, ըստ այդմ էլ՝ ստույգ բառանջատումը (խմբ.):*

*829. ԳԱՎԻԹ.* խաչքար՝ կանգնած արևելյան պատին կից, ներքուստ, 2 տող.



ԿԱՆԿՆԵՑԱՒ
ԽԱՉՍ ՅՐԱՄԱՆԱՒ ՎԱԽ[ԱԽ]ԻՆ:

*830. ԳԱՎԻԹ.* արևելյան պատին, բեմի հարավահայաց նիստի վրա, արտաքուստ, մանրատառ, 9 տող.



ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Բ ԱՅ ԵՍ՝ . . . . . . . . . . ՄԵՐ ԳՆԱ[Ծ] . . .
ԱՒԱԿՆ . . . . ԱՒՈՐՆ . . . . . .
ՔՍ ԽՈՍՏԱ[ՑԱ]Ն ՄԻԱԲԱՆՔՍ ՁԱՏԿԻՆ
ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ԽԱԼԸԼԻՆ ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՐՑՆ ԵՒ ԻՒՐԵԱՆՑ ՈՐԴԵԱՆՑ ԵՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ, ԵՒ ԻՒՐ ԵՂԲԱՐՑՆ
ՈՐԴԵԱՑ ԵՒ [ԻՒՐ] ԱՄԷՆ ՄԵՐՁԱՒՈՐԱՑ ԵՒ ԽԱՒՍՏՈՎԱՆ ՈՐԴԵԱՑՆ ԻՄ: ԵԹԷ ՈՔ Ի ՄԵՐՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ ՅԱՆԷ ՋՆՋՈՂԵՐՆ Ի ՎԱՆԻՑՍ՝ ԸՆԴ [Ա] ԱՅՍ . . . . Յ-
ՐԷԻՑԻ ԴԱՏԻ ԱԾ ԵՒ ՄԵՐ ԱՍԳԻՆ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է:

*Ծանոթ.* Սկզբի տողերը խիստ վնասված են: Վերջին տողում ԱՍԳԻՆ պետք է լինի ԱԶԳԻՆ: Խալիլի որդի Տէրունը 1281 թ. կանգնեցրել է գյուղամիջյան Ամենափրկիչ խաչկալության խաչքարը: Ներկա արձանագրությունը ժամանակով մոտ է դրան:

*831. ԳԱՎԻԹ.* արևմտյան պատի որմնասյան կամարին, 7 տող.



ԵՍ՝ ՍԻՐԻՊԱՇՏ ԵՏ-
ՈՒ :Ի: (20) ԴԱՀԵԿԱՆ Ի ՍԲ
ԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՏԻՐԱՑ[ՈՒ]
Վ[ԱՐ]Դ[Ա]ՊԵՏ[Ի] ԵՐԵՏ ԻՆՁ :Ա: (1) ԱՒՐ
ԺԱՄ ԶԱ[ ՍՏՈՒԱ ]ԾԱԾՆԻՆ ՇԱ-
ԲԱԹ ԱՒՐՆ: ԿԱՏԱՐԻՉ[Ք Ի]
Ն ԱՒՐՀՆԻՆ [ՅԱՅ]: ԱՄԷՆ:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 116, ՎՏ,143, «Էջմիածին»,1951, ԺԱ-ԺԲ, 46:

*Ծանոթ.* Ժամանակը որոշվում է Տիրացու վարդապետի առաջնորդության տարիներով (1237-1250 թթ.): ՎՏ-ում նշված է 1204 թ. տակ:

*832. ԳԱՎԻԹ.* հարավարևելյան որմնասյան կամարի ոտքի խաչից վեր, 4 տող.



. . . . . . . . . . .
ՅԵՏ ՄԱՀՎԱՆ
ԼԵԼԱԻՆ :Ա: (1) ՔԱՌ-
ԱՍՈՒՆՔ ԱՐՆԵՆ ԵՒ
ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ:

*Հրատ.* «Էջմիածին».1951, ԺԱ-ԺԲ, 46:

*Ծանոթ.* Արձանագրության սկզբնամասը չի պահպանվել:

*833. ԳԱՎԻԹ.* արևելյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, որմնախորշի մեջ, խաչքարից ներքև, 5 տող.



ԿԱՄԱՒ ԱՅ՝ ԵՍ՝ ՅՈՎՍԻԱ, ՅԻՆՈՔ ԵՒ ԻՐԻՑՔՈՅՐՍ,
ՏՈՒԱՔ ԶՄԵՐ ՀՈԳՈՅ ԲԱԺԻՆ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ԵՒ ՍՊԱՍ-
ԱՒՈՐՔՍ ԷՏՈՒՆ Ի ՏԱՐԻՆ Զ :Գ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳԵԼ Զ ՔՍ
ՄԵՐ ՅԱՆՈՒՆ՝ ԱՒԵՏԵԱՑ Ա[ ՍՏՈՒԱ ]ԾԱԾՆԻՆ: ՈՎ ՉԱՌՆԷ՝ ՄԵՐ
ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է: ԱՄԷՆ:

*Հրատ.* «Էջմիածին». 1951. ԺԱ-ԺԲ, 48:

*Ծանոթ.* Վերջին՝ կիսաեղծ տողը գրված է մանր տառերով: Առաջին տողի *ես՝ Յովսիա, Յինոք եւ իրիցքոյրս* հատվածը հրատարակչի մոտ աղավաղված է. *ես Յովսիայինոք և Բիրց քոյրս:* Աստվածածնի ավետման օրը, այն է՝ Գաբրիել հրեշտակապետի ավետիսը Մարիամին՝ սուրբ հոգու զորությամբ հղիանալու և Փրկչի (Հիսուսի) մարմնանալու մասին, ավանդաբար համարվում է ապրիլի 7-ը: Հիշատակի այս արարողությունը կատարվում է յուրաքանչյուր հինգշաբթի, քանի որ ավետումը կատարել է շաբաթվա չորրորդ օրը:

*834. ԳԱՎԻԹ.* արևելյան պատի հյուսիսային մասում, նախորդից ներքև, 5 տող.



ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]ԲՆ ԱՅ ԵՍ՝ ՅԱԿՈԲ Ք[Ա]Հ[ԱՆԱ], ԵՏՈՒ ԶԻՄ ԱՅ-
ԿԻՆ ՅԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԶԻՄ ԾՆՈՂԱՑՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻ[ՒՆ]
ՆՈՐՈԳԵՑԻ: Յ[ՈՎՍԵ]Փ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ] ԵՒ [ՄԻԱԲԱՆՔՍ Ե]ՏՈՒՆ :Գ: (3) ՊԱՏԱՐԱԳ Ի
ՏԱՒՆԻ ԴԱՒԹԻ ԵՒ ՅԵՍ ԱԲՐԱՀԱՄՈՒ . . . .
ԶԺԱՄՆ. ՅԵՏ ԻՄ ՄԱՀՈՒ ԵՒ Զ . . . . . . . . . . . . . . . . . . .

*Հրատ.* «Էջմիածին»,1951, ԺԱ-ԺԲ, 48:

*Ծանոթ.* Խիստ հողմահարված և մաշված են մանավանդ վերջին տողերը: Պարզվում է սակայն, որ Հակոբ քահանան, իր այգին (= այկին) տալով, նորոգել է իր ծնողների միաբանությունը վանքին: Այսինքն, ծնողները ինչ-որ ժամանակ միաբանել են եկեղեցուն և, հավանաբար, պատարագի իրավունք ստացել: Այժմ նրանց որդին նորոգում է միաբանման վճիռը, որպեսզի կրկին պատարագ մատուցվի նրանց հիշատակին:

Չորրորդ տողի *յեա* հավանաբար *եա* շաղկապն է, որ նշանակում է *կամ*, ասել է՝ քահանայի և ծնողների համար սահմանված երեք պատարագները մատուցել Դավթի կամ Աբրահամի տոնին:

*Առաջին տողի վերջում կարդացվում է Ս (Յ տառ ընդհանրապես չկա), և, թերևս նվիրատվության առարկան «սկի» (ՍԿԻՀ) է: Երրորդ տողի առաջին կեսը խիստ եղծված է, նույն վիճակում են նաև չորրորդ և հինգերորդ տողերի երկրորդ կեսերը (խմբ.):*

*835. ԳԱՎԻԹ.* արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, 6 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ՍՄԲԱՏ, ԶԻՄ ՀՈՂՆ ՏՈՒ-
Ի Ի ՍԲ ԳՐԻԳՈՐՍ: Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ] Յ[ՈՎՍԷ]Փ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ
ԵՏՈՒՆ :Ա: (1) ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԹԵՈԴ-
ՈՍԻ: ՈՎ ԶՀՈՂՆ ԽԼԷ ՈՒ ԶԺԱՄՆ ԽԱՓ-
ԱՆԷ՝ ՆԶՈՎՍ ԱՌՑԷ ՅԱՅ ԵՒ ՄԵՐ
ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է ԱՌԱՋԻ ԱՅ:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 111, «Էջմիածին»,1951, ԺԱ-ԺԲ, 50:

*Ծանոթ.* Գրված պիտի լինի 1250 թվից հետո, երբ Տիրացու վարդապետ առաջնորդին հաջորդել է Յովսէփը:

*Յովսեփ* անունը սղված է միայն երկու տառով (ՅՓ), այն կարելի է կարդալ և Յովասափ:

*836. ԳԱՎԻԹ.* արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, Նախորդի տակ, 6 տող.



ԵՍ՝ ՅՈՀԱՆԵՍ, ՍԱԿԱՆՈՒՆ ՇԷԿ, ԵՒ ԵՂԲԱՅՐՈՐԴԻ ԻՄ

ՍԱՐԳԻՍ, ՄԻԱԲՆԱԵՑԱՔ ԵՒ ՏՎԱՔ :Բ: (2) ՄԲ ՆՇԱՆ

ԱՐԾԱԹԻ՝ ՅԵԿԵՂԵՑԻՍ: ԵՒ ՍՊԱՍԱՒՈՐՔ ՄԲ ՈՒԽ-

ՏԻՍ ԽՈՍՏԱՑԱՆ :Ա: (1) ⌊ԱՒՐ⌋ ՅԵԿԵՂԵՑԻՍ Ի ՏԱՒՆԻ

. . . . . . . . . . . . . . . . . . . ՉՔՍ ՅԱ

. . . . . . . . . . . . . . . . . ԱՄԷՆ:

*Հրատ.* Ջալալյանց, Ա. 112, «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 50:

*Ծանոթ.* Վերջին տողերը խիստ հողմահարված են:

*837. ԳԱՎԻԹ.* Նախորդից անմիջապես ձախ, հողմահար ու կոտրտված, 5 տող.

. . . . . . . ԵՒ ԱՄՈՒՍԻՆ

. . . . . . . ՄԲ ՈՒԽՏԻՍ ՅԵ

. . . ⌈ՄԻԱԲԱՆ⌉ՔՍ ԷՏՈՒՆ :Ա: (1) ԱՒՐ

. . . . . . . . . . . . . ՏԱՐԻՆ

. . . . . . . . . . . . . . . . . . . . .

*Ծանոթ.* Արձանագրության մնացորդը նկատել է նաև Գ. Սարգսյանը, «որից տեղ-տեղ հատուկտոր բառեր և տառեր միայն կարելի է կարդալ և որովհետև դրանք որևէ ամբողջական իմաստ չեն տալիս, ուստի հաշվի չենք առել» («Էջմիածին», էջ 50):

*838. ԳԱՎԻԹ.* երդիկի ձևավոր քարերի վրա, 1 տող.



. . . . ⌈ԳՐ⌉ԻԳՈՐՈ ԵՒ ԱՍԼԱՆԲԵԿԱ, ՈՐԴՈՑ ՄԱՐԾՊԱՆԱ

ՅԱՌԱՋՆՈՐԴ⌈ՈՒԹԵԱՆ ՏԻՐԱՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ . . . .

ՅԻ⌉ՇԵԼ ԱՂԱՉԵՄ . . . . . . .

*Հրատ.* «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 51:

*Ծանոթ.* Արձանագրված քարերն ի հայտ են եկել փլատակները մաքրելու ընթացքում: Դրանք գավթի երդիկի կամարակիր թաղի հենարան հանդիսացող ձևավոր քիվի կտորներն են, որոնց վրա, ներքնից հեշտ կարդալու համար, գեղեցիկ ու խոշոր տառերով փորագրվել են կառուցող իշխանների՝ Գրիգորի և Ասլանբեկի հիշատակագիրը և,

ցուցե նաև՝ շինարար-ճարտարապետի անունը ու կառուցման տարեթիվը: Սակայն բոլոր քարերը չէ, որ գտնվել են, ուստի և արձանագրությունը չի ամբողջանում: Չնայած սրան, պարզվում է, որ գավիթն ավարտվել է Մարծպան Մամիկոնյանից հետո, իսկ նա, համենայն դեպս, արդեն չկար 1241 թ.:

Հանված քարերն այժմ հավաքված են գավթի ներսում, հարավարևմտյան անկյունում:

***839. ԳԱՎԻԹ.*** հյուսիսարևմտյան սյան խոյակի վրա, 9 տող.

Ի ԹՎ[ԻՆ]:ՈՂԵ: (1246);
ԵՍ՝ ԶԱՏԿԷՐ ԵՒ ԱՍԱՆԷԹ,
ԿԱՆԿՆԵՑԱՔ ԶՍ̅Բ̅ ՆՇԱՆՔՍ ԵՒ ԸՍՏ
ԿԱՐԻ ԱՒԳՆԵՑԱՔ ՏԱՆՍ:
ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ] ԵՒ ՄԻ-
ԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ
:Ա: (1) ՊԱՏԱՐԱԳ
ՄԵԶ: ԿԱՏԱՐԻ-
ՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱ̅Յ̅: ԱՄԷՆ:

*Հրատ.* «Էջմիածին»,1951, ԺԱ-ԺԲ, 49:

***840. ԳԱՎԻԹ.*** հարավարևմտյան սյան բնի վրա, 7 տող.

ԿԱՆԿՆԵՑ-
ԱՒ ՄԻՒՆՍ ԵՒ ԽԱ-
ՉՍ ՅԻՇ-
ԱՏԱԿ ԿԻԿ-
ԱԻՆ ԵՒ ԱՄՈՒՍՆ-
Ո ԻՒՐՈ Տ̅Ր̅ Ա̅Ծ̅
ՈՂՈՐՄԻ ՆՈՑԱ:

*Հրատ.* «Էջմիածին»,1951, ԺԱ-ԺԲ, 49:

***Ծանոթ.*** Ինչպես Սանահինում, Հաղբատում և այլուր, այնպես էլ Բարձրաքաշում տարբեր նպաստավորողների հատկացումներով կառուցվել են խորաններ, կանգնեցվել սյուներ՝ ինչպես այս դեպքում: Կիկան և կինը՝ Խոցադեղը հանդես են գալիս նաև գավթի մի ընդարձակ արձանագրության մեջ՝ բազմաթիվ նվիրատուների շարքում:

***841. ԳԱՎԻԹ.*** հյուսիսարևելյան ավանդատան հարավային պատի ստորին շարքի վրա, խիստ հողմահարված, 6 տող.

ԵՍ՝ ԲԵԹԱՒ . . . . ՅՐՍ ՅԻՇԵՑԻ ԶԱՒՐ ՄԱՀՈՒԱՆ ԻՄՈՅ, ԵԿԻ
. . . . . . . . . . . Ս̅Բ̅ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ ԷՐ . . . . . . .
ՄԵՐ ՀՈԳՈ ՊԱՇԱՐՆՍ Ի ՄԻԱԲԱՆՈՒԹԻ[ՒՆ]Ս . . . [ՍԱՀՄԱՆ]ԵՑԻՆ ԵՒ ԵՏՈՒ
Ի Ս̅Բ̅ ՈՒԽՏՍ, ԵՒ ԵՏՈՒՆ Բ̅Ն̅ ԻՆԶ :Բ: (2) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ի ՏԱՒՆԻ ԵՐԵ. . .
ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ՄԵԶ ԵՐԵ[ՄԻ]ԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ: ՈՎ ԽԱ[ՓԱՆ]Է՝ ԻՄ ՄԵՂԱՑՆ
ՏԷՐ Է [ԱՌԱՋԻ Ա̅Յ̅]:

*Հրատ.* «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 48:

***Ծանոթ.*** Երեսակալները տեղ-տեղ մաշված, ոչնչացված են: 4-րդ տողի *բն ինձ* անսովոր կապակցությունը երևի նշանակում է *երկուսն ինձ, երկու վանահայրերն ինձ*՝ նկատի ունենալով համաժամանակյա վանահայրեր Տիրացուին և Հակոբին:

*842. ԳԱՎԻԹ.* արևմտյան դռան փականապատ խորանի գմբեթարդին, ձեռագիր, սպիտակավուն ներկով.

Յ[ՈՎՀԱՆՆԵՍ] ԹՈՒՄԱՆԵԱՆ:

*Ծանոթ.* Բանաստեղծն ստորագրել է գավթի խորանի փլուզումը կանխելու նպատակով իր նախաձեռնությամբ չոր հենապատը դիմհարելու ժամանակ, ԺԹ դարի վերջում: Համենայն դեպս, նման միջոցառման շնորհիվ պատից անջատված աբսիդը մնում է նույն՝ թեքված վիճակում, որն առանց դրա վաղուց ընկած կլիներ:

*843. ՏԱՊԱՆԱՔԱՐ.* արևելյան պատին կից, տափակ, 3 տող.

ԷՐԷՄԻԱ ԷՐԷՄԻԱ<br>
ՄՔԾԷՐՈՒՆԻ ՄՔ ԾԷՐՈՒՆԻ:<br>
ՉԵ [ԹՈՒԻՆ] ՉԷ (1256):

*Հրատ.* Զալալյանց, Ա, 117, ՎՏ, 99, «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 51 (քաղել է Զալալյանցից):

*Ծանոթ.* Բարձրաքաշի վանքի առաջնորդն էր Տիրացու վարդապետից հետո: Հիշվում է նաև 1250 թ.:

*844. ԽԱՉՔԱՐ.* վանքից հարավ-արևելք, անմշակ պատվանդանի վրա, քիվին, 2 տող.



[ՄՔ ԽԱՉՍ] Ք[Ա]ՐԵԽ[Ա]ԻՍ Է<br>
... [ՅՈ]ՀԱՆԻՍԻՆ:<br>
........................ ..................................

ՀՊՎԱ

*Ծանոթ.* Խաչքարը գորշ բազալտից է, քիվի ձախ եզրը ջարդված: Խաչամարմնում խաչ-խաչելությունն է, կոթունից վեր են ձգվում թռչնաուրվապատկերներ, իսկ նռնաթև խաչաթագը ներառված է շրջանակվող կամարի մեջ: Անսովոր է տեղական ոճերին:

*845. ՉԻԹՀԱՆԻ ՔԱՐ.* Վերևից վանք տանող ճանապարհին ընկած քարի եզրին, շրջանաձև.



Ի ԹՎ[ԻՆ] :ՉԺԵ: (1266), Ի ՊԱՐՈՆՈՒԹԵ[ԱՆ] ՈՐԴՈՑ ՄԱՐԾՊԱՆԱ ՎԱՐՀԱՄԱ ԵՒ ՄԱ-<br>
ՄԻԿՈՆ, ՇԻՆԵԱԼ ԱՐԴԵԱՄ[Բ] Ք Ի Վ[Ա]Ր[Դ]ԱՊԵՏ[Է] ԳՈՐԳԱ:

*Հրատ.* ՊԲՀ, 1977, 4, 254:

*Ծանոթ.* Չիթհանի փլատակները պեղել և հանգամանալից ուսումնասիրությունը կատարել է Գ.Կարախանյանը: Այս Մամիկոնյանները գուցե թե Մարծպանի և Մամքանի (Ս. Աստվածածին եկեղեցին կառուցողներ) թոռ ու ծոռն են:

***846. ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆ.*** Խաչքարը կանգնած է եղել վանքից 100մ հարավ, Դսեղ բարձրացող ճանապարհի եզրին, Ս. Հարություն կամ Ագռավի տապան կոչվող մատուռի վրա: Այժմ մատուռն ավերված է, խաչքարը՝ ընկած, տեղում է պատվանդանը, որի արևելյան նիստին 5 տող.

ԻԹՈՒԻՍ ։ ՈՁԳ ։ՇԻՆԵՑԱՒՄ̃ԲՅԱՐՈՒԹԻՍԵՒԿԱՆԿՆԵՑ · ·
ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՎԴԻՆՅՈՎԱՆԻՍԻԵԵՂԲԱՐՆՈՐԻՆՆ · ·
ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՄԵԾԻՆՄԱՐԾՊԱՆԱԵՁԱՒԱԿԱՑՆՈՐԱԱՍԼԱՆ · · ·
ՆԵԳՐԻԳՈՐՈԵՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵՏԻՐԱՑՈՒՎԴԻՈՐՔԵՐԿՐՊԱԳԵ-
ԱՇԽԱՏՈՂՍՈՐԱՅԱՂԱՒԹՔՅԻՇԵՑԷՔԵԱ̃ԾՁՋԵՋՅԻՇԷԱՄԷՆ

Ի ԹՈՒԻՍ ։ՈՁԳ։ (1234), ՇԻՆԵՑԱՒ Մ̅Բ ՅԱՐՈՒԹԻ[ՒՆ]Ս ԵՒ ԿԱՆԿՆԵՑ[ԱՒ Մ̅Բ ԽԱՉՍ Ի]
ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻ[ՒՆ] Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ]ԻՆ ՅՈՎԱՆԻՍԻ ԵՒ ԵՂԲԱՒՐ ՆՈՐԻՆ Ն. . . . . .
ՅԻՇԽԱՆՈՒԹԵ[ԱՆ] ՄԵԾԻՆ ՄԱՐԾՊԱՆԱ ԵՒ ՁԱՒԱԿԱՑ ՆՈՐԱ ԱՍԼԱՆ[ՊԵԿԻ]-
Ն ԵՒ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՏԻՐԱՑՈՒ Վ[ԱՐ]Դ[ԱՊԵՏ]Ի: ՈՐՔ ԵՐԿՐ-
ՊԱԳԷ[Ք Ձ]-
ԱՇԽԱՏՈՂ ՍՈՐԱ ՅԱՂԱՒԹՔ ՅԻՇԵՑԷՔ, ԵՒ Ա̅Ծ ՁՋԵՋ ՅԻՇԷ: ԱՄԷՆ:

*Հրատ.* Ջալալյանց, Ա, 117, ՎՏ, 46 (կրճատ), «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 51:

***Ծանոթ.*** Պատվանդանի վերին, հյուսիսային անկյունը կոտրված է. այդ մասի պակասող բառերը հեշտությամբ լրացվում են, բացի երկրորդ տողից, ուր Ջալալյանցը Սարգիս անունն է կարդացել, բայց մեր տետրում, ինչպես և Սարգսյանի մոտ այդ անվան մի տառն է նշված և այն՝ Ն-է, որը Սարգիս անվան հետ կապ չի կարող ունենալ (Ս. Բ.):

***847. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ.*** ընկած վանքի ծորը մտնող ճանապարհի սկզբին, այլ բեկորների մոտ, 1 տող.

ՏՐԱ̃ԾՈՂՈՐՄԵԱՋԵՆԱՏԻՆ Տ̅Ր Ա̅Ծ ՈՂՈՐՄԵԱ ՁԵՆԱՏԻՆ:

***Ծանոթ.*** Խաչքարը ճանապարհի ուղեցույց է, այստեղ եղել է փոքր մատուռ:

***848. ԽԱՉՔԱՐ.*** Բարձրաքաշից 100 մ արևմուտք, գեղաքանդակ, սրանկյուն խորանով, հյուսիսային կողին, 7 տող.

ԿԱՆԳՆԵՑԻ
ԽԱՉՍ Ի ԲԱՐԵ-
ԽԱՒՍՈՒԹԻՒՆ
ՍԱՀԱԿԱ
ԵՒ ԵՂԲԱՅՐ
ՆՈՐԱ ԽՈ-
ՑԱԴԵՂԻՆ:
ՀՊՎԱ

***849. ԽԱՉՔԱՐ.*** Նույն տեղում, երկատված, կիսաթաղ, ճակատին հողմահար, ելնդատառ.

Ա̅Ծ ՈՂԵՐՄԵԱՅ ՎԱՐԴԱՊԵՏ . . . ՍԻՄՈՆ
ՀՊՎԱ

***850. ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂ.*** գյուղամիջյան գերեզմանոցում, պատվանդանի հարավային նիստին, 5 տող.



ԵՄ՝ ՎԱՐՀԱՄ, ՁԱՒՏԱՐՇԻՆ ԱԲ-
ԳԱՆՆ ԹՈՂԻ. ՎԿԱ ԱՊՆԱՅՆ, ԳԱՒԿԱՅ-
Ն ԵՒ ԽՈՐԻՇԱՀ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ :Յ:
:ԺԸ: (318) ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԵՍՑԻ:
ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԻ ՄԽԻԹԱՐՉԻՆ:

*Հրատ.* «Նոր դար» օրաթերթ, 1887,136, «Ազգ. հանդ.», VII-VIII, 348, «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 51-52, Շահինյան, ՀՄԿՀ, 55:

***Ծանոթ.*** Այս արձանագրությունն ավելի վաղ հրատարակվել է «Նոր դար» օրաթերթում՝ աղավաղումներով ու սխալներով: Լալայանի մոտ ևս այն իմաստազրկված է: Նա 1-2-րդ տողերը կարդացել է. ***Ես Վահրամ զատատ շինաբ քաննկ թողի վկայ ապնայն Գազկայ*** միանգամայն անհարիր բնագրին, աղավաղված ու անիմաստ: ***Մխիթարչին*** էլ գրել է փոքրատառով՝ այն դիտելով սփոփող, վիշտ-տրտմությունը կիսող, փարատող և ոչ անձնանուն: Սարգսյանը ևս անհաջող է կարդացել ***զԱստարշին աբգանն թողի*** (= Օտարածին գյուղի աբգանը՝ ջրահարկը զիջեցի) հատվածը՝ ***զատարշին արձանն թողի:*** Իրական և ստույգ է Շահինյանի վերծանությունը:

Կարևոր է, որ Մամիկոնյան իշխան Վահրամը (որը հիշված է նաև Բարձրաքաշի ծիթհանի 1266 թ. արձանագրության մեջ), նկատի ունենալով խնդրի կարևորությունը և հնարավոր վճռախախտումը կանխարգելելու նպատակով, ***վկա***՝ ակտին մասնակից է դարձնում գործարքին համամիտ արյունակիցներ Ափնային, Գավկային և Խորիշահին: Քառակող կոթողը Զ-է դդ. է և պատահական չէ, որ սովորության համաձայն, ԺԳ դ. արձանագրության մեջ հիշատակված չեն այն կանգնեցնելու հանգամանքները:

Արձանագրության վերջում հիշված Մխիթարիչը գրիչն է: Ս. Բարխուդարյանը Մխիթարչին համարել է «կոթողի շինողն ու արձանագրությունը քանդակողը», իսկ ժամանակը՝ Ժ-ԺԱդդ. (ՄՀՃՎ, էջ 181): Ս. Ավագյանն առաջարկել է ***զԱստարշին*** վերծանել ***Աստարծին*** (ՎԱՀ, էջ 18):

***851. ԽԱՉՔԱՐ.*** գյուղամիջյան գերեզմանոցում, քիվին՝ 1, թիկունքին՝ 8 տող: Միացվել են, քանի որ երկատվել է թյուրիմացաբար.



ԱՔ ԽԱ[ՉՍ] ԲԱՐԷ[ԽԱՒՍ] ԴԱՍՏԱՅԳՈՒԼԻՆ:
ՄԵՂԱՅՊԱՐՏ ՏԻՐԱՅՏՈՒՐ
[ՏԻՐ]ԱՑՈՒ ՇԻՆԵՑԱՔ ԱԳԱՐ-
[ԱԿՍ]. . . ՈՒ...ԿՍ...
...[ՍԱ]ՐԷԿՍ . . .
...ԱՑՆ ԵՒ ԿԱՆԵ . . .
[Ա]ՆԽԱՓԱՆ ՊԱՀ-
[Ե ՅԻՇ]ԱՏԱԿՆ: ԿԱՏԱ[ՐԻՉՔ]
ԱՒՐՀՆԻՆ ԱՅ:

***Ծանոթ.*** Գրերը վնասված-ջարդված են, և դժվար է հասկացվում իմաստը: Բարձրաքաշի արձանագրություններում հիշատակված Ագարակն ու Սարեկան երևի նույնն են:

***852. ԽԱՉՔԱՐ.*** գյուղամիջյան գերեզմանոցում, կեսից կոտրած և միացված, երկաստիճան խոշոր պատվանդանի վրա, քիվին և մակերեսին 6 տող.



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ Է ՅԱԿՈԲ-
ԻՆ, ԽԱԹՈՒՆԻՆ:
ԹՎ⌊ԻՆ⌋ :ՌԿ: (1611)
ՏՐ ԽԱ-
ՉԱՏՈՒՐ-
ԻՆ:

***Ծանոթ.*** Խաչքարի կոթունի տակ շրջանակի մեջ հավասարաթև խաչ է, իսկ կողերին տարածև հյուսազարդեր են: Տեր Խաչատուրը թերևս պատվիրատուն է:

***853. ԽԱՉՔԱՐ.*** գյուղի արևելակողմի գերեզմանոցում, 1 տող.

Ի ԹՎ⌊ԻՆ⌋ ՉԽԴ (1295):

***Ծանոթ.*** Խաչքարի ձախ կողմը վերից վար կոտրված, ոչնչացված է: Պատվանդանը երեք աստիճանից է, եղած գրերը նշմարվում են երկրորդ կտորի վրա: Հյուսիսային թևում կանգնած է մի այլ խաչքար՝ խորանում երկու խաչով:

***854. ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** գյուղի գերեզմանոցում, հանրախանութից հյուսիս-արևմուտք, բլրի վրա, սեղանաձև, հարավային կողին գութան, հյուսիսային կողին՝

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՒՍՏԱ ՍԱՐՔԻՍ
ԱՆԴՈՆՈՎԻ. ՈՎ ՈՐ ՀԱՆԴԻՊԻ՝ ՈՂ-
ՈՐՄԻ ԱՍԻ. ԱՄԵՆ: 1895Թ. ԱՄԻ:

***855. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ.*** գերեզմանոցում

ԹՎ⌊ԻՆ⌋ ՈՀ (1221):

***856. ԽԱՉՔԱՐ.*** նույն գերեզմանոցում, քիվին ելնդատառ 1 տող, թիկունքին՝ փորագիր 7 տող.



⌊ՈՂՈՐՄԵԱ⌋ ՔՍ ԱԾ ՄԽԻԹԱՐՉ⌈ԻՆ⌉:
Ի ՈՀԷ (1228) ԹՈՒ⌈ԻՆ⌉ ԵՍ ՄԽԻԹ
ԱՐԻՉ ԾԱՌԱՅ
ԱՇՈՏՈ, ԿԱԿՆԵՑ
Ա ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ Ե-
Ի ԶԻՄ Ս⌊Ր⌋ԲԱՐԱՆ ԱՐԺ
ԱՆ⌈Ի⌉ Ս⌊Ր⌋ԲԱ⌈Ց⌉
ԱՄԷՆ:

***Ծանոթ.*** Արձանագրության վերջին տողերն անսովոր են, սակայն հստակ է, որ Մխիթարիչը Աշոտ Մամիկոնյանի հպատակն է (= *ծառայ*):

*857. ՏԱՊԱՆԱՔԱՐ*. գերեզմանոցում, Մխիթարչի խաչքարի մոտ, 4 տող.



ԹՎ[ԻՆ] ՌՂԷ (1648):
ԱՅՍ Է ՀԱՆԳ-
ԻՍՏ ՄԽԻԹԱՐ
ՍԱՐԿԱՒԱԳԻՆ:

*858. ՏԱՊԱՆԱՔԱՐ*. նախորդի մոտ, անավարտ 2 տող.

ԹՎ[ԻՆ] ՌՀԹ (1630)
ԱՅՍ Է Հ[ԱՆԳԻՍՏ]...

*859. ԽԱՉՔԱՐ*. նախորդների մոտ, մեծ և գեղաքանդակ, քիվավոր պատվանդանի վրա. քիվին, 1 տող, խորանի գլխի գոտում ուռուցիկ 2 տող, խաչի հանգույցում խորագիր 3 տող.



ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ[ՒՆ] ՍՏԵՓԱՆՆՈՍԻ[Ն] ԵՒ ԳՈՀԱՐԻՆ, ՈՐՔ ԵՐԿԸՐՊԱԳԷՔ՝ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ
ՍԱՐԳ-
ԻՍ:

*Ծանոթ*. Խորանում վարպետի անունն է: Սարգիսը Թոմասի ընկերակցությամբ խաչքար է կերտել Մարցի «ճգնավոր» հանդամասում 1245 թ.:

*860. ԽԱՉՔԱՐ*. գյուղի մեջ, գեղաքանդակ, խոշոր պատվանդանի վրա, քիվին և ստորին պռնկին, 2 տող.



ՉԻԳ (1274) [ԹՎԻՆ, ՅՈՒՍՈՎՆ] ԱՅ, ԿԱՆԿՆԵՑԱՒ ՄԲ ՆՇԱՆՍ ՀԱՅՐԱՊԵՏ Ք[ԱՀԱՆԱՅԻ]Ս: ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇ[ԵՑԵՔ] Ի ՔՍ:

*861. ԽԱՉՔԱՐ*. գյուղամիջյան գերեզմանոցում.

ԹՎ[ԻՆ] ՌՀԷ (1228):
ՆԵՐՍԷՍ Ն[ԿԱՐՈՂ]:

*Ծանոթ*. Վարպետի անունը փորագրված է խաչքարի նեղ կողին:

*ԱՄԵՆԱՓՐԿԻՉ-ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ ԽԱՉՔԱՐ*. գյուղամիջյան պատմական գերեզմանոցում, մակերեսին և պատվանդանին.

*862.* Քիվին, Հիսուսի ձախ ձեռքի ժապավենին, փորագիր ավետարանական բանաձևումը.

ԵՍ ԵՄ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ:

***Ծանոթ.*** Խաչքարը արվեստի հիասքանչ ստեղծագործություն է՝ հագեցած սյուժետային հարստությամբ և անթերի բուսազարդումներով: Կենտրոնում, եռալիք Գողգոթային կանգնած «փայտե» խաչն է՝ վրան խաչված Քրիստոսը՝ գլուխը հակած դեպի աստվածամայրը (աջ): Քիվի մեջտեղում, շրջանակի մեջ, համբարձման տեսարանն է՝ երեք մատներով օրհնելու համար աջը վեր պարզած: Հիսուսից աջ, առասպելական թռչունի մեջքին արևի, ձախում՝ ցլի վրա լուսնի պատկերաքանդակներն են:

*863.* Վերջիններին մերձ, զարդերին ձուլված, ելնդատառ.

ԱՐԵԳ ԼՈՒՍ
........ ԻՆ

*864.* Խաչի ցուցանակին, պիղատոսյան հեգնախոսքերը, ուռուցիկ գրերով.

ՍԱՅ է ԹԱԳԱՒ-
ՈՐ ՀՐԷԻՑ:

*865.* Խաչաթագին, Հայր աստծո ձեռքի և աղավնակերպ հոգուն կից, ելնդատառ.

ԱՋ ՏՆ,
ՀՈԳԻ
ԱՅ:

*866.* Խաչի հորիզոնական թևերին, փորագիր.

ՁԵՌՔ, ՈՐ ՁԵ-
ՐԿԻՆՍ ԱՐԱՐԻՆ, ՏԱՐԱԾԷՑԵ-
Ր Ի ԽԱՉԻՍ:

*867.* Տիրոջ թևերի տակ, Աստվածածնի և ավետարանչի լուսապսակներին, խորագիր.

Ա|ՍՏՈՒԱ|ԾԱԾԻՆ ՅՈՀԱՆՆԷՍ

*868.* Առաջինների տակ, խաչից իջեցվելիք Տիրոջը գրկելու պատրաստ Արիմութացու և ունելիով գամը քաշող հավատավորի լուսապսակներին, փորագիր.

ՅՈՎՍԷՓ ՆԻԿՈԴԵՄՈՍ

*869.* Խաչակոթունի տակ, ծաղկազարդ Գողգոթայի մեջ, Նախամարդու լուսապսակին.

ԱԴԱՄ

*870.* Խաչքարի պատվանդանի երրորդ աստիճանի արևմտյան և հարավային նիստերին, 3 տող.



Ի ԹՎ[ԻՆ] :ՉԼ: (1281)

ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Բ ՆԱՅ ԵՍ՝ ՏԵՐՈՒՆՍ, ՈՐԴԻ

ԽԱԼԸԼԻՆ, ԻՄ ԱՂԲԵՐԱՆՑՈՎՍ ԿԱՆԿՆԵՑԻ Զ-

[ԽԱ]ՉՍ ՅԱՆՈՒՆ ԳՐԻԳՈՐՈ, ՈՐ ԶՈՒՐ ԵՒ ԴԱՌՆ ՄԱՀՈՒԱՄԲ Ի ՔՍ

ՓՈԽԵՑԱՒ, ՈՐ ԷՐ ՊԱՐԾ-

ԱՆԱՑ . . . ԵՂԲԱՅՐ ՄԵՐ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

*Ծանոթ.* Գ. Հովսեփյանի իրավացի ենթադրությամբ՝ Գրիգորը Մարծպանի տղան է, Մամիկոնի հայրը, որը, ինչպես ասված է՝ զոհ է գնացել խարդավանքին, սպանվել խաբեությամբ, հանիրավի, անտեղի ***(զուր եւ դառն մահուամբ):***

*871.* Նույն խաչքարի պատվանդանի վերին աստիճանի հյուսիսային ճակատին, 1 տող.

ՎԱՐՀԱՄ ՅԻՇԵՑԷՔ:

*Հրատ.* «Նոր դար», 1887, 138, Ջալալյանց, Ա. 105, «Ազգ. հանդ.», VII-VIII, 349, Հովսեփյան, Հաւուց թառի Ամենափրկիչը, էջ 74, Բարխուդարյան, ՄՀՑՔՎ, 145, 190 (քաղել է Լալայանից):

*Ծանոթ.* Վահրամը խաչքարի վարպետն է: Մասնագետները նրան են վերագրում նաև Մարցի (1285 թ.) և Խոսրովի արգելոցից էջմիածին բերված (1279 թ.) «ազնիվ արվես-

տով» կերտված Ամենափրկիչ խաչքարերը: Ի դեպ, վերջին Ամենափրկիչը հորինվել է Մամիկոնի պատվերով՝ ողորմի հայցելով ծնողներին՝ պարոն Գրիգորին և Մամքանին: Պետք է կարծել, որ Գրիգորի սպանությունը տեղի է ունեցել 1279-1281 թթ. միջև:

Այս և մի քանի այլ դեպքերում մակագրություններն առանձին թվահամար են ստացել այն պատճառով, որ դրանք, իրապես, ինքնուրույն բովանդակություն ունեն, վերաբերում են առանձին գործող անձանց, արծարծում են կտակարանային զանազան թեմաներ, որոնք արժանի են չեշտադրման:

***ԽԱՉՔԱՐ ՍՈՒՐԲ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ.*** գյուղից 2կմ հյուսիս-արևելք, դարավանդի եզրին.

***872.*** Քիվի տակ, ճոխ զարդերով պարուրված խորանի մեջ գահին բազմած Տիրոջ սնարին.

ՅՍ ՔՍ

***873.*** Ձախով կրծքին սեղմած, Տիրոջ սրբազան արյունը «պարունակող» բաժակի (թե գրքի) մակերեսին.

ԵՍ ԵՄ
ԼՈՅՍ
Ն[ԱՇԽԱՐՀԻ]

***Ծանոթ.*** Ավետարանական բանաձևումը չի ամբողջացվել տեղ չլինելու պատճառով: *Փորագրված չէ ԱՇԽԱՐՀԻ բառը (խմբ.):*

***874.*** Խորանի երեք եզրակողերին, 1 տողով.



ԻՇԽԱՆՈՒԹԵ[Ա]Ն ՄԱՄԻԿՈՆԻՆ ԵՒ ՈՐԴՈՅ ՆՈՐԱՅ ՎԱՐԴԱՆԱՅ, ԵՍ՝ ՀԱՅՐԱՊԵՏՍ, ՈՐԴԻ ԹԷՐԻՆ ԿԱՆԿՆԵՑԻ ՍԲ Տ[Է]ՐՈՒՆԱԿԱՆՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԱՍԼԱՆԲԷԿԻՆ, ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ [ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ]:

***Հրատ.*** Ջալալյանց, Ա, 117-118, «Ազգ. հանդ.», VII-VIII, 424, ՎՏ, 229, Հովսեփյան, Հաւուց թառի Ամենափրկիչը, 72, «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 51, «Էջմիածին», 1960, Ը, 46:

***Ծանոթ.*** Բոլոր հրատարակիչների մոտ անխտիր կան բացթողումներ, վրիպումներ, սխալներ: Արձանագրությունը չի ավարտվել, թեև տեղ կա: Ջալալյանցն ու Լալայանը

բաց թողած մասը լրացրել են *յիշեցէք ի Քրիստոս* բառերով: Ա. Շահինյանը *յիշատակ ինձ եւ Ասլանբէկին* հատվածը կարդացել է *յիշատակին Չ եւ Ասլան Բէկին* (տե՛ս նրա «Հայկական խաչքարերի արվեստը», «Էջմիածին», 1960, Բ, էջ 46 և նույն հեղինակի «Հաղթանակների և երկրի ազատության առթիվ կանգնեցված խաչքարեր», «Էջմիածին», 1960, Թ, էջ 49 հոդվածները) և թյուրընթերցման հետևանքով խաչքարը համարել է Չ-1251 թ. գործ: Այստեղ հիշատակված Մամիկոնը այլ վիմագրերից հայտնի Արղունի տղան է, Մամիկոն սպարապետ հորջորջված Մամիկոնյան իշխանի թոռնորդին, որոնք ԺԳ դարի երկրորդ կեսի գործիչներ են:

Խաչքարը տեղադրված է Դսեղից 2 կմ հյուսիս-արևելք, դարավանդի եզրին, Բարձրաքաշ իջնող երբեմնի սայլուղու սկզբում, Մարցի ձորահովտի հանդիսավոր կետում: Նրանից հյուսիս, վանքից արևմուտք, ժայռապռնկին մնում են մատուռի ավերակներ, որոնք կարծես ուղենշել են Բարձրաքաշի տեղը ու քաջ զինվորի պես հսկել նրա անդորրը:

427 սմ բարձրությամբ կոթողը բաղկացած է հատկապես Դսեղում տարածված չհղկված եռաստիճան պատվանդանից և նրա վրա զետեղված 240x100 սմ չափերի խաչքարից: Զանգակաձողիկների փարթամ զարդերով, երկրաչափական մոտիվներով հագեցած ոսկերչական նրբին արվեստի կատարյալ ստեղծագործություն է:

Գեղաhիրաշ այս hորինվածքը հանրությանը հայտնի է *Սիրուն խաչ* անվամբ. ժողովրդական նման գնահատանքի արժանացած միակ ստեղծագործությունը բազմահազար խաչքարերի շարքում:

*875. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ.* գյուղի արևելյան կողմում, 2 տող.

ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՍԲ ՆՇԱՆԻՍ՝ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:
ԹՎԻՆ ՈՂԹ (1250):

*876. ԽԱՉՔԱՐ.* Դսեղից 2 կմ հյուսիս-արևելք, Քարինջ տանող ճանապարհի եզրին, «Թոփուկ խաչ» վայրում, քիվին և պատվանդանին, 2 տող.



Ի ԹՈՒ[ԻՆ]:ՉԺԷ: (1268) ՍԲ ՅԱԿՈԲ:
ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ՝ ՅԱՂԱԻԹ ՅԻՇԵՑԷՔ:

*Ծանոթ.* *ՍԲ ՅԱԿՈԲ*-ը խաչքարի անունն է:

*877. ԽԱՉՔԱՐ.* մեծ և գեղաքանդակ, եռաստիճան պատվանդանի վրա, նախորդից հյուսիս, քիվին, վերին շրջանակին և թևերի շուրջը, խառնիխուռն.



Ի ԹՎ[ԻՆ]:ՉԻԲ: (1273): ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ
ՍԲ ՆՇԱՆԻՍ՝ ԱՄԷՆ ՅԱՂԱԻ-
ԹՍ ՅԻ[Շ]ԵՑԷՔ: ԱԻՐՀՆԵ-
ԱԼ Է [Յ]ԱՆՈՒՆ
ԱՅ, ՈՐ ՈՂՈՐ
ՄԷԼ
Ծ[Ն]ԱԻՂԱ[ՑՆ]:

*Ծանոթ. Հորիզոնական խաչաթևի վերին անկյուններում փորագրված վերծանությունը որոշ չափով կասկածելի է (խմբ.):*

***878. ԽԱՉՔԱՐ.*** Նախորդների մոտ, քիվին և երկու բեկորի վրա. 6 տող.



Ի ԹՎ⌊ԻՆ⌋ :ՉԼԲ: (1283), ԵՍ՝ ԼՈՒՍԻԿ, ԾԱՌԱՅ $\overline{\text{ԱՅ}}$, ԿԱՆԿՆԵՑԻ
⌈ԶԽԱՉՍ ՅԱՆ⌉ՈՒՆ ՈՍԿԻ ՏԻԿՆ
⌈ԱՅ ԵՒ ԳՈՇԿ⌉ԱՆ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳ-
⌈ԷՔ՝ ՅԻՇԵՑԷՔ⌉ ԼՈՒՍԻԿՆ ՈՒ ՇԱՐԵ...
⌈... ՏԱՐԻՆ :Բ: (2) ՊԱՏԱՐ⌉ԱԳ Ո⌈Ս⌉ԿԷ
⌈ՏԻԿՆԱ. ... ԵՒ⌉ Բ: (2) ԳՈՇԿ⌈ԱՆ⌉:

***Ծանոթ.*** Կարմրավուն գրանիտե խաչքարի չորս կտորներն ընկած են եռաստիճան պատվանդանի մոտ, ջարդոտված են նաև գրերը, և արձանագրությունը չի ամբողջանում: Խաչքարերի հիշատակագրություններում պատարագաժամերի սահմանումն անսովոր է, հետևաբար առնչվում է վանքին:

***879. ԽԱՉՔԱՐ.*** Չաղիծորի (Թումանյան քաղաք) կռացած ժայռի տակ, Դեբեդի աջ կողմում, կոթունատակին 9, հարավային կողին՝ 5 տող.



Թ⌊ՈՒԻ⌋Ս
ՈՂՁ (1247),
ԵՍ՝ ՅԱՄԼ-
ԻԿՄ՝ ՈՐԴԻ ՍԱԲԱՏԱՅ, ԹՈՌՆ ՅԱՄԱԶԱ⌈Ս⌉-
ՊԱ, ՇԻՆԵՑԻ ԶԿԱՐՄՈՒՆՋՍ, ԵՒ ԿԱՆ-
ԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ, Ի ՅԻՇԱՏԱԿ ՅՈԳ-
ՈՅ ԻՄՈՅ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ ՄԱՄ-
ՔԱՆԱ: ՈՎ ՍԱՒՑՈՅ ՏԷՐ ԼԻՆԻ ԵՒ ԶԱՒ-
ԷՐԵ ⌈ԿԱ⌉ՐՄՈՒՆ⌈ՋՍ⌉ ԴԱՏԻ Ի $\overline{\text{ՏԷ}}$, ԿԱԷՆԻ
ԵՒ ՅՈ⌊Ւ⌋Դ-
ԱԻ ՄԱՍ-
ՆԱԿԻՑ
ԼԻՑԻ: ԱՄ
ԷՆ:

*Հրատ.* «Լրաբեր», 1979, 5, 114:

*Ծանոթ.* Խաչքարն արվեստի նշանակալից գործ է: Երջանակներին բուսական հյուսկեն զարդեր են, ուղղանկյուն խորանում 2 խաչեր, կողունին՝ իրար հագած 2 եռանկյունիներով շրջագումը:

Հրատարակչի (Գ. Կարախանյան) դիտողությամբ՝ «Անճեկնելի է արձանագրության ութերորդ տողի ... ՈՎՍԱՑՈՅ հնչյունախումբը», նա նկատել է նաև, որ հաջորդ տողի հստակ երևացող ՐՍՈՒՆ կարող է ԿԱՐՍՈՒՆՋ լինել, որի «նախորդ և հաջորդ գրերը հստակ չեն երևում»: Վերջին տողի սկիզբը կիսաեղծ է, իսկ երկու երրորդը իսպառ ոչնչացված՝ խաչքարը ցած նետելու հետևանքով: Այդ հատվածը լրացվել է *ով սացոյ* (= սոցա, սորա՝ կամրջի) *տէր լինի եւ զաւէրն (?) կարմունջս՝ դատի յայ , կաէնի* տարբերակով՝ անառարկելի չհամարելով այն: Խաչքարը տեղահանվել ու ցած է տապալվել 1930-ական թվականներին, որի պատճառով ջարդվել են քիվը, արձանագրության որոշ հատվածները: Այն պատվանդանին է վերատեղադրվել 1990 թ. Աշիկ Վարդանյանի խմբի կողմից:

*Արձանագրություն, որն արդ չկա.*

***880. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** արևելյան պատին, դրսից.

Թուին ՈԿԵ(1216), ես Վասակ յիշեցի զաւեղ աւր
Տեառն և ետու զիմ հոգւոյ պարէնն եկեղեցիս. առաջնորդ
Տիրացու վարդապետ եղբայրքս ետուն պատարագ ի տաւնի
Սրբոյ Գրիգորի որ խափանէ դատի յԱստուծոյ:

*Հրատ.* Ջալալյանց. Ա, 109. ՎՏ, 60. «Էջմիածին», 1951, ԺԱ-ԺԲ, 44:

*Ծանոթ.* Հրատարակել է միայն Ջալալյանցը, տեղում այժմ չկա: Եթե թվականը ճիշտ է արտագրված, ապա այն չէր կարող Ս. Գրիգորի (Աստվածածնի) պատի վրա լինել, ինչպես նշում է հրատարակիչը, որովհետև այն կառուցվել է :ՈՀ: (1221) թվին, այլ՝ միմիայն միանավ եկեղեցու պատին: Սարգսյանը տեղադրում է ժամատան հյուսիսարևելյան ճակատին: Տիրացու վարդապետի առկայությունը ևս կասկածելի է դարձնում թվի ճշտությունը:

## ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ

***881. ԵԿԵՂԵՑԻ.*** հարավային պատին, երկու քարի վրա, պատի տարբեր հատվածներում, 5 տող.

